

Ի թվին ՌՃԾԶ. եղև վախճան տէր Ապրիլին եւ ետուն եկեղեցոյ սուրբ նշան մի եւ ամփոփեալ թաղեցին ի դաւիթս եկեղեցոյ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի ամէն: Թվին ՌՃԾԷ. վախճանեցաւ տէր Կարապետն եւ ամփոփեալ թաղեցին ի դաւիթ սուրբ եկեղեցոյս եւ ետուն ժ. դուռուշ լուսկին սուրբ Աստուածամօրն Աստուած ողորմի ասէք ամէն: Ի թվին ՌՃԿ. ամին տէր Ապրիլին տունն առանք սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ ԴՃ. դուռուշի. մեր դանձապեա հաճի Մարտիրոսին ձեռքն եկեղեցոյ արդիւնէն. եւ անտի կիսեցանք զսեղանատանին տեղն: Քանզի առաջն սեղանատուն չունելով թէ մեռելոցի եւ թէ այլ հոգեբաժինի եկեղեցոյ մէջ նստելով շատ հոգեւոր փնաս կու լինէր. ըստ ասելոյ սրբազան առաքելոյն Պօղոսի ի պրակս իւր: Ոչ է տուն տեան ձեզ տեղի հաց ուտելոյ. միթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ եւ կամ ըմպելոյ եթէ զեկեղեցեան Աստուծոյ արհամարիցէք եւ անէք փնասս բազում: Եւ մեք զայս լսելով եւ այլ բազում գրոց սրբոց վկայեալ թէ փնաս է եկեղեցոյ մէջ հացկերոյթն: Չայս օրօնելով մեք անարժան եւ անպիտան յեանեալ եւ ամենայն բարեաց թափուրքս տէր Անտոն եւ տէր Ակոր ծառայք սուրբ Աստուածածնայ որդորելով զժողովուրդս ըստ կարեաց մերոց շինեցինք զայս սեղանատունս յիշատակ անջնջելի. Աստուած ողորմի յիշատակ տուողաց հոգոցն ամէն: Նախ Աստուած ողորմի տէր Անտոնին զի անուամբ միայն քահանայ եւ ոչ զործովս ետու ծ. զուռուշ սեղանատան շինելու յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց հօրս տէր Ստեփաննոսին եւ մօրս Հռիփսիմէին եւ ընկերօջն Հեղինէին. դեռ եւս աղօթից եւ պատարագաց մասնակից լինիմք աղօթիք ձերօք ամէն:

Ի թվին ՌՃԿԳ. ամին ապրիլ ամսոյ ԺԱ. օրն աշխարհամատրան կիրակի գիշերն եղև հրկիզութիւն մեծ որ ոչ է եղեալ այնպիսի զարհուրելի հրկիզութիւն որ այրեցաւ. Գ. խան. մեծ պէտէստէն. դաքեհաճիւր ճամիւի, սաքանէ ճամիւի. ԶՃ. խանութով աւելի կամ պակաս վայրի շուկան պուլուս պէտէստէնն տաշխանէն գատն. բովանդակ այրեցաւ վերի շտուռն. սաքֆաքի ճամիւին տայանմըլ եղև. մեր եկեղեցոյ անօթն պուլուզ պէտէստէնն էր. Աստուծոյ ողորմութեանն խալսեցաւ. զարմանք զարմանք որ գիշերն ի բուն մինչեւ ի սպառել Գ. կողմանն

մնաց կրակի մէջն եւ Աստուած պահեաց: Ով եղպարք տուք զոհութիւն Քրիստոսի եւ մօրն նորա կուսին Մարիամու:

Ահա կամ իմ այտ աննել բան որ շահաւէտ է ունինդնողաց. քանզի յորժամ եղև հրկիզութիւն ունէր սուրբ Աստուածամօր եկեղեցոյ. Գ. խանութ մինն պուլուզ պէտէստէնին դուռն մտաց ձախակողմն դիհն. Բ. քան առջեւն. մէկն հաճի Տատուրին էր մէկն հաճի Նասայիին որ առաջն առեալ էանք եկեղեցոյ արդիւնէն եւ սոքա եւս այրեցան. իրրեւ այրեցաւ երան ճարէճիքն ոտքի վերայ ասելով թէ որովհետեւ այրեցաւ պարտիք վերստին գնել վազըՔէն. եւ Տատուրն այլ այսպէս հօքմ առաւ թէ եւս առաւել քեաւուր պիտան վազըՔին է եւ քեաւուր պիտայի տիրոջքն ժողովեցան եւ զտին ի միջի իւրեանց հոճէտ մի որ վաղուց եանդընէն զօրով էի շինեցուցել տիրոջներուն. եւ զայն հոճէտն առեալ դնացին Ստամպոլ եւ մտան ի մեծ տիպանն եւ առեալ Փերման հանդերձ Փէթիպոյով ասելով թէ մէկ ստակ պարտք չունին վազըՔին եւ այս տեղի մոլլան եւս հոճէտ ետուր տեղըն վազըՔին պիտան ձերն է պարտք չունիք: Եւ այս հոճէտներուն մէկն մեր քեաւուր պիտայ խանութին է պուլուզ պէտէստէնին դուռն քօփն է: Իրրեւ եղև թվականն ՌՃԿԳ. զայն երկու խանութն այլ պատեցուցանք քեաւուր հանդերձ երկաթէ դոնօք ձեռամբ հաճի Մարտիրոսին եկեղեցոյ արդիւնէն: Ով եղպարք իմ սիրելիք եւ դուք պարտիք Աստուած ողորմի ասել վերոյգրեալ հաճի Մարտիրոսին եւ այլ աշխատողաց եւ պատճառ եղողաց եւ որք յիշէք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ամէն:

Նորոգեցաւ յիշատակարանս ձեռամբ աւարժան տէր Անտոնին թֆն. ՌՃԿԵ. քանզի այս գիրքի միջի եղող գրեանքն այս է: Նախ Մարգիս գիրքէն սկսեցանք որ է կաթողիկէից մեկնութիւն լուսաւոր հոգի հօր եղպորս տէր Արուսիանին հետն. քանզի սա գրագիր գոլով իմ վերա շատ երախտիք ունի Աստուած լուսաւորէ իւր հոգին. եւ ետոյ վախճանեցաւ ՌՃԿԳ թվին. եւ ես այլ թոյլ տուի պատճառելով թէ քարոզգիրք շատ տպագրեցին. զայս ժԳ. տետրն մնաց ասանց կապ. ետոյ կոնտակն հնացեալ էր եւ գիրն ծանր էր կարդալու: Եւ սկսեցի վերստին նորոգել հանդերձ պատմագրով ով ընդերձողք եւ լսողք եղբայրք թէ կուզէք հանդերձ ճառօփն կարդայք

թէ չես ուզէր դճառն թող եւ կոնդակն կարգա ահա ցոյց տուած եմ կոնդակն եւ ճառն: Բայց զամէնն կարգայիւր լաւ էր քանզի առաջի ժամանակի նեղութիւնն իմանալով հոլով միթիթարութիւն գտնուիք զի յոյժ աշխատեալ եմ զտիւ եւ զգիշեր անքուն մնալով ի օրինելոյ: Դարձեալ Ե. այլ տետր տողարեալ պարսպ կապած եմ ետոյ եղողինն զրեւոյ եւ դու ով սիրելի թէ հմուտ ես գրես թէ չես ուրիշ թղթի մուսէվէտէ անես գրագիր եկած ժամանակն գրել տաս. եւ մի հոգոցիւ զմեզ յիշես: Եւ դարձեալ գիրքի ետքն գրեանք կայ յոյժ օգտակար է կարդացողաց եւ լսողաց. եւ զայս գրեանքս հաւաքեալ միատեղ ետու կապել. եւ ետու յիշատակ սուրբ Աստուածածնի ինձ եւ ծնողացս տէր Ստեփաննոսին եւ մօրս Հռիփսիմէին ընկերօջն Հեղինէին եւ այլ ամենայն արեան մերձաւորացս: Ով աստուածասէր քահանայք եւ սիրելի ժողովուրդք որժամ ընդեռնուք եւ օգտիք յիշեսձիք ի մաքրապիսյ աղօթս ձեր զվերոյ գրեալսն եւ դուք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ամէն. Հայր:

(Շարունակելի:) Հրատակիչ՝ Հ. Պ. ԶՕՐԹԵԱՆ

**ՊԵՏՄՈՒԹԻՆ ԼԵՉՐԵԱՆ ՏՈՒՄԻ**

ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ  
Աշխատակից՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԳԷՈՍԵԱՆ  
(Շարունակութիւն:)

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**  
ՊԱՏՄՈՒԹԻՆ  
ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՉՈՒԱՅ  
(1815—1918)

ԳՂՈՒԽ Ա.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՆ

«Հասարակական կարիքները պիտի բաւարարուին իր հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու ջանքերով» — ասել էր ձեռնարանի տեսուչ, յետագայում վերատեսուչ, Գէորգ Քանանեանը իր ճառի մէջ, արտասանած ձեռնարանի 50ամեակի փառաւոր հանդէսին:

Եւ, տարակոյս չկայ, որ ասել էր մի ճշմարտութիւն, որ առաւելագոյն վերարբուժում է այն աղգերին, որոնք զօրք են պետական անկախութիւնից, պետական հարազատ իշխանութիւնից:

Հայ ժողովրդի պատմութիւնը, մասնաւորապէս սկսուած 15րդ դարի սկզբից, երբ Ռուբինեանց հարստութեան անկումով հայ ժողովուրդը կորցրեց իր անկախ գոյութիւնը, իր պետականութիւնը, տալիս է բազմաթիւ ցայտուն ապացոյցներ յիշեալ մտքի կատարեալ ճշմարտութեան:

Պատմական այդ մոմէնտից սկսած հայ ժողովրդի հասարակական ու մշակութային յառաջադիմութիւնը ընթացել է հէնց հայ «հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու ջանքերով»:

Մի Միթիթար Արբասայր Սերաստացի (1676—1749) իր մեծատաղանդ յաջորդներով վենետիկում ու վիեննայում, մի Ներսէս Աշտարակեցի իր Ներսիսեան զպրօցով, մի Գէորգ Գ. կաթողիկոս իր Գէորգեան ձեռնարանով էջմիածնում, Աղարարեան եղբայրներ իրենց «Աղարարեան զպրօցով» Հաշտարխանում, Սալիպեան զպրօցը Թէոդոսիայում, Ն. Նախիջևանի զպրօցը եւ, վերջապէս, Դորպատի հայ ուսանողների փայլուն փառանքը, — եղել են մի-մի զործօն ոյժեր, որոնք կերտել են հայ մշակոյթի հոյակապ տաճարը եւ արգելք են եղել հայ ժողովրդի

ապագադայնացման օտար պետութիւնների քայքայելի ազդեցութեան տակ:

Լազարեանները եւս եղան այդ գործիչներից, որոնք բերին իրենց հարուստ բաժինը հայ ազգային մշակոյթի զարգացման եւ նրա հասարակական կեանքի յառաջադեմութեան: Եւ այդ արին, հիմնելով հեռավոր հիւսիսում՝ Մոսկուայում, իրենց ձեմարանը, որ եղաւ մի լուսատու Փարոս ամբողջ մի դար պետականութիւնից զուրկ հայ ժողովրդի համար: Եւ այդ մի ժամանակ էր, երբ հայութիւնը օտարներէ, ծանր լուծի տակ խարխալում էր խոր տգիտութեան խաւարի մէջ...:

Եւ Լազարեան ձեմարանը եղաւ «Մուկուլեան Աքէնի Հայոց...»:

\*

Լազարեանները իրենց զպրօցի հիմքը դրեցին 1815 թուին, այսինքն՝ մի ժամանակ, երբ Արեւելեան Հայաստանը հեծեծում էր ասիական բռնակալների բիրտ կրօնկի տակ, երբ հայութիւնը, անկարող լինելով ապրել իր մայրենի հողի վրայ, անընդհատ գաղթում էր թէ իր հարեան՝ Վրաստանը եւ թէ հեռավոր երկիրներ, իսկ հայրենիքում մնացածները, գտնուելով մտաւոր խաւարի մէջ, գոհ էին ամէն կարգի նախապաշարունակների:

Այդ օրերին շատ սուր կերպով էր դառնում մի կանոնաւոր եւ հաստատուն հիմքերի վրայ զբուծած զպրօցի կարեւր: Եւ ծնունդ առան իրար ետեւից, նախ, Լազարեան ձեմարանը եւ ապա 1824 թ. Ներսիսեան զպրօցը թիֆլիսում:

«Կարելի է համարձակ կերպով ասել, — գրում է Լէօն — որ եթէ մեզանում չլինէին Լազարեանները եւ Ներսիս Աշտարակեցին, ոռւսահայերը դեռ շատ երկար թաղուած կը մնային ասիական խաւարի մէջ: Նրանց զպրօցներն էին մեզ կեանքի հրաւիրողները՝ այդ զպրօցներից էր, որ հայի խաւար հորեղանի վրայ բացուեց գարնանային առաւօտը: Դրանք երկուորեակներ էին, միատեսակ էին մտածում, գործում: Երկուսի դաւանանքը միեւնոյնն էր, երկուսն էլ միեւնոյն ճանապարհով էին ընթանում<sup>1</sup>»:

\*

<sup>1</sup> Լէօ, «Մտերմանոս Լազարեանցի կենսագր.», էջ 33:

Արդ, ի՞նչ «դաւանանք» ունէր ձեմարանը, ի՞նչ նպատակներ էր հետամուտ նա, — պարզեք երկու խօսքով, մանրացնենք ընդհանուր դադարները:

ձեմարանի կանոնադրի մէջ, տպագրուած միայն 1830 թ., 15 տարի անց իր հիմնադրութիւնից, ձեմարանի նպատակը ձեւակերպուած է հետեւեալ կերպով.

«Նպատակ ձեմարանին՝ է վարժել զհայազգի եւ զօտարազգի մանկունս կարեւորագոյն ուսմամբք Եւրոպական եւ Ասիական լեզուաց, այնպէս՝ զի աւարտողքն ի նմա զընթացս ուսմանց ըստ սահմանադրեալն կարգի, եթէ իցեն յաշխարհական վիճակէ՝ կարիցեն ծառայել Տէրութեան՝ մտանելով յարքունի պաշտամունս թէ՛ ի Զինուորականս եւ թէ՛ ի Քաղաքականս. իսկ եթէ իցեն յեկեղեցականաց Հայոց՝ կարիցեն ծառայել հայրենի եկեղեցւոյ իւրեանց՝ ստանձնելով զպաշտօն եկեղեցական՝ ըստ տնօրէնութեան հոգեւոր իշխանութեան<sup>2</sup>»:

ձեմարանի հիմնադիրները, սակայն, իրենց մտքում ու հոգում գուրգուրացել են շատ աւելի բարձր ու լայն նպատակներ, քան այդ պաշտօնական ձեւակերպութիւնն է արտաբերում:

Նրանց նպատակն է եղել, նախ, իրենց սաներին տալ այնպիսի ընդհանուր կրթութիւն, որպէս զի նրանք ի վիճակի լինեն առանց դժուարութիւնների հանդիպելու ստանալ բարձրագոյն կրթութիւն Մոսկուայի համալսարանում, երկրորդ՝ որպէս զի սովորեն արեւելեան լեզուները, որոնց թուում առաջին հերթին Հայոց լեզուն, պատմութիւնն ու կրօնը, թէ գործնական եւ թէ զուտ գիտական նպատակներով: Յայտնի է նաեւ, որ նրանք ունեցել են մի այլ բաղձանք եւս՝ իրենց բարեպաշտ սրտերում՝ տալ հայ եկեղեցուն կրթութեամբ հոգեւորականներ, որոնց պահանջը այդ օրերին խիստ զգալի է եղել:

«Հայ հոգեւորականութիւնը, — գրում է Ա. Երեցեանը, — տգէտ էր, ըմբոստ, անպատկառ, ո՛չ իւր կարգը եւ ո՛չ պատիւը ճանաչող. եկեղեցիք թալանուած, ազգային եկամուտները յափշտակուած, ազնուականք եւ իշխանականք — անուշք, գոռոզք իւրեանց ցեղական ծագմամբ, բայց զազրելի վարք ու բարքի աէր, կեղեկիչք, հարստահարիչք ու միկների ու տկարների. ժողովուրդն

<sup>2</sup> Մ. Մսերեանց, «Յիշատակարան», մասն Գ, էջ 14:

ընկղմուած խաւարի մէջ, բարոյապէս ընկած, օտարամոլութեան հակուած, խղճալի ու ցաւալի դրութեան մէջ...<sup>3</sup>»:

Ահա այս վիճակն էր, որ ի նկատի ունէին Լազարեաններն եւ ձգտում էին, որ իրենց ձեմարանը դար ու ամօքէր միանգամայն ազգային բոլոր ցաւերը: Եւ երբ Հայոց կաթողիկոսը դիմում արեց եւ առաջարկեց Լազարեաններին, որպէս զի ձեմարանում յատուկ հոգեւոր բաժին բացուի կրթութեամբ, հովիւներ պատրաստելու, որոնք ապագայում ծառայէին հայ եկեղեցուն, Լազարեանները սիրով ընդառաջեցին վեհաօրհնի ցանկութեան, բաց արին ձեմարանում 1841 թ. հոգեւոր բաժանմունք յատուկ ծրագրով եւ ընդունեցին 15—20 աշակերտներ իրենց հաշուով, թէեւ նման մի քայլ չափազանց ծանրաբեռնում էր ձեմարանի կրթական ծրագրին ու խճողում այն:

Բայց էականը Լազարեանների համար ձեմարանի կեանքի այդ սկզբնական շրջանում այն չէր, թէ պաշտօնական կանոնադրը ի՞նչ սահմաններ էր դնում նրա կրթական գործի համար, առաւել եւս հոգ չէր, որ ծրագրերը խճողում էր մի շարք նպատակների հետամուտ լինելով, էականը այն էր, որ նրանք կամենում էին, որ իրենց կրթական հաստատութիւնը լինի Հայոց դպրոց, դասնար մի լուսատու ջահ հայութեան համար, լինէր մի տաքուկ օջախ հայ չքաւոր երեխաների համար եւ նրանք կրթութիւնն ու դաստիարակութիւնն հայ ոգով, ապագայում լինեն հայ ազգի պիտանի գաւակներ: Ազգային մթնոլորտ էին ուզում ամենից առաջ ստեղծել իրենց զպրօցում: Եւ պիտի ասել, որ այդ նպատակին նրանք լիովին հասան: Այդ օրուանից սկսած ձեմարանում իշխել է հայի շունչ, ազգային ոգի, որ, կարելի է ասել առանց չափազանցութեան, հրաշքեր է գործել: ձեմարան էին մտնում երեխաներ, որոնց համար հայերէնը օտար լեզու էր. նրանց մայրենի լեզուն եղել է չերքէզերէն<sup>4</sup>, ոռուսերէն կամ որեւէ դժուար հասկանալի հայերէն գաւառարարաւ: Մի քանի տարի անց, ամէն ինչ կերպարանափոխուել է, այդ աշակերտները ոչ միայն սկսել են ազատ հայերէն խօսել ու գրել, այլ եւ սիրել են Հայոց

լեզուն, իսկ ոմանք նոյն իսկ նուիրուել նրա ուսումնասիրութեան:

«Լազարեան ձեմարանը, — ասում է նրա նախկին սան Երուանդ Շահազիզը, — եղել է Հայոց ամենահին մեծ ու կանոնաւոր ուսումնարանը, որ առաջինն է սկսել ուսումնական մարզիկ տալ ազգին<sup>5</sup>»:

ձեմարանը կարողացել է իր սաների մէջ զարգացնել նաեւ սէր դէպի բարձրագոյն կրթութիւն:

Դոկտ. Արտաշէս Արեղեանը իր «Քերպուլէ Պատկանեալը Դորպատում» յօդուածի մէջ տալիս է թանկագին տեղեկութիւն այդ մասին:

«Չհաշուած ազատ ունկնդիրները, — գրում է նա, — Դորպատի համալսարանի գերմանական շրջանում, որ տեւեց մինչեւ 1889 թ. եւ ուսականացաւ այնուհետեւ, այդ համալսարանը յաճախած են թուով մէկ քառասնեակ արձանագրուած, իսկական հայ ուսանողներ: Այդ քառասնեակ հայ ուսանողները մի կարեւոր մասով Մոսկուայի Լազարեան ձեմարանի նախկին սաներ եղած են<sup>6</sup>»:

\*

Լազարեան ձեմարանը՝ շնորհիւ իր ազգային ոգու, իր ծրագրին, որ հնարաւորութիւն էր տալիս բարձրագոյն ուսում ստանալու եւ թէ այն հանդամանքի, որ գտնուում էր Ռուսաստանի մտաւոր կենտրոնում, Մոսկուայի համալսարանի կողքին, շատ շուտով է ձեռք բերում մեծ համբաւ ու համակրանք հայ հասարակութեան բայն շրջաններում: Նրա համբաւը տարածուել հասել է մինչեւ Հնդկաստան ու գրաւել հայ նոր սերունդին ու զարձեւ նրա գեղեցիկ երազների առարկան:

«Ինչը տարեկան հասակումս, — պատմել է իր մասին Մկրտիչ Էմինը իր յօդուածի ժամանակ 1886 թ. — հայրս ինձ տարաւ Ն. Ջուղայից Հնդկաստան, Կարխաթա, եւ տուեց «Հայոց Մարդասիրական ձեմարանը»: Այստեղ ես առաջին անգամ իմացայ Լազարեան ձեմարանի գոյութեան մասին, որ իմ մտածողութեան, ցնորքներին առարկան դարձաւ, եւ ես չհանդուստացայ մինչեւ որ

<sup>3</sup> Ա. Երեցեանի ձեռագիր գրութիւնից է քաղել Ս. Մալխասեանը իր «Պատմ. Ներսիսեան զպրօցի» գրքից էջ 8:

<sup>4</sup> Փայլուն օրինակ է ծառայում ձեմարանի Հայոց լեզուի ապագայ ուսուցիչ՝ Կարապետ Կոստիկեանը, որը մտնում է ձեմարան, լինելով չերքէզախօս...:

<sup>5</sup> Տե՛ս Եր. Շահազիզ, «Մկրտիչ Յովսէփեանի իմ ինչ», կենսագրական-գրական տեսութիւն: Թիֆլիս 1900, էջ 270

<sup>6</sup> Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1947 թ. Հոկտ.— Դեկտ., էջ 627. ընդգծումները Դոկտ. Ա. Արեղեանինն է:

Հաստայ մի սուեղական առևտրական նաև, որ գնում էր Ստոկ-Հոլմ: Ես անցայ Ասիան, Ափրիկէն, Եւրոպան եւ Սուեզի ու Փինյան-դիոյ վրայով հասայ Մոսկուա — բաղձալի ձեմարանը՝ 1830 թուին<sup>7</sup>, երբ 14—15 տարեկան մի պատանի էի<sup>8</sup>»:

Բայց ինչո՞ւ եւ ի՞նչպէս է եղել, որ Լազարեան ձեմարանը իր ծննդեան վաղ օրերից սկսած կարողացել է այդքա՛ն մեծ համբաւ ձեռք բերել ու գրաւել հայ մատաղ սերունդի սրտերը, դաննալ նրա ուսումնասանչ երազները առարկան:

Մեր կարծիքով, բացի վերը յիշատակած հանգամանքներից, դրա ամէնէական պատճառներից մէկն եղել է այն, որ ձեմարանը իր հիմնադրութեան առաջին իսկ օրուանից եղել է ապագասակարգային դպրոց եւ ընդունել է իր գիրկը ամենից առաջ հայ ժողովրդի որբ ու չքաւոր երեխաներին Հայաստանի ամենախուլ անկիւններից հաւաքած, մինչդեռ մեր թեմական դպրոցներն եւ նոյն իսկ ներքինեան դպրոցը իր կեանքի առաջին շրջանում եղել են սոսկ հայ արտօնեալ դասակարգերի՝ ազնուականների, առևտրականների ու հոգևորականների երեխաների կրթարաններ:

Այս հանգամանքը վճռական դեր է կատարել ձեմարանի ժողովրդականացման ու ընդհանուրի համակրանքը գրաւելու գործի մէջ:

Լազարեաններն իրենց այս ժողովրդասէր ձգտումը իրագործելու նպատակով հէնց սկզբից յատկացրել են որոշ հիմնադրամ 30 հայ որբ ու չքաւոր երախաներ ընդունելու համար, որպէս իրենց թոշակաւորներ: Այդ երեխաները եղել են գիշերօթիկ, որոնց սպրուստն ու կրթութիւնը միանգամայն ապահոված է եղել: Հետագայում նրանց թիւը 30ից բարձրացրել են ու հասցրել 44ի:

Այսպիսով, Լազարեանները մատուցել են հայ ժողովրդի խոնարհ խաւերին այնպիսի մեծ բարիք, որի գնահատանքի համար չկայ չափ ու կշիռ:

Տարակից չկայ, — ինչպէս մենք ցոյց տուինք մեր ներածութեան մէջ, — որ Լազարեան ձեմարանի բազմաթիւն գործու-

<sup>7</sup> Ուրիշ աղբիւրներում մասնաճշտած է 1829 թ. աշունը:  
<sup>8</sup> Եր. Շահադիզ, «Մկրտիչ Էմինի կենսագր.», էջ 58—59:

նէութեան ու գոյութեան յարատեւութիւնը երաշխաւորուած է եղել հէնց սկիզբից նրանով, որ ձեմարանի հիմնադիրները իրենց պայծառատեսութեան մէջ ընտրել են Մոսկուան որպէս վայր իրենց դպրոցի համար: Եւ Մոսկուան, որպէս Ռուսաստանի հոգեմտաւոր կենտրոն իր մեծահամբաւ համալսարանով, թողել է ձեմարանի կրթական-դաստիարակչական գործի վրայ խիստ բարերար ազդեցութիւն:

Մոսկուայի համալսարանը միշտ եղել է յառաջադէմ գաղափարների շտեմարան ու մտաւոր ազատամիտ հոսանքների հնոց, չնայած երկրում տիրող քաղաքական աննպաստ պայմաններին, իսկ երբեմն նոյն իսկ անհանդուրժելի դարձած պետական ուժերի մին:

«Մեծ խելք եւ հեռատեսութիւն ցոյց տուեց Յովակիմ Լազարեանը մանաւանդ իր դպրոցի համար տեղ ընտրելու գործում, — ասում է Լէօն: Մոսկուան թէեւ հեռու էր հայերի բնակութեան տեղերից, բայց իրեն Ռուսաստանի մտաւոր առաջնակարգ մի կենտրոն, կարող էր մի բարեկարգ դպրոցի բոլոր յարմարութիւնները տալ<sup>9</sup>»:

Բայց Մոսկուան եւ նրա համալսարանը ո՛չ միայն յարմարութիւններ են տուել, այլ եւ բարոյական ու գաղափարական փոխադարձ կապ են հաստատել, որից մեծապէս օգտուել են երկու կողմերը:

Այս մասին արտայայտուել է նաեւ Մոսկուայի համալսարանի թեկտոր Գարբիէլ Իվանովը. ձեմարանի 75ամեակի առթիւ իր ներկայացրած ուղերձի մէջ:

«... Ես կենդանի կերպով գգում եմ, — ասուած է այդ ուղերձի մէջ, — ու մեծապէս գնահատում այն հոգեկան կապը, որ գոյութիւն ունի ձեմարանի եւ Համալսարանի միջեւ. այս երկու հաստատութիւնները կապուած են միմեանց հետ ընդհանուր նպատակով՝ դիտութեան զարկ տալ ու կրթութիւն տարածել մեր հայրենիքում, երկուսն էլ ունեցել են ընդհանուր գործիչներ եւ փոխադարձաբար սնուել են մէկը միւսից, — ձեմարանը մատակարարել է Համալսարանին հիմնաւոր դիտական պատրաստութեամբ ունկնդիրներ, Համալսարանը՝ ձեմարանին հասուն դասատուներ ու դաստիարակներ:

<sup>9</sup> Լէօ, «Ստեփ. Նազ. Կենսագր.», էջ 17:

«ձեմարանին վիճակուած է եղել լուծելու մի շատ դժուարին խնդիր՝ ընտելացնել դիտութեան եւ պետութեան ընդհանուր կրթութեան գետնի վրայ երեխաներին ու պատանիներին, որոնք ծնուած են եղել ու մեծացել են հեռաւոր ծայրագաւառում միանգամայն իւրայատուկ պայմաններում՝ բնութեան, կենցաղի ու լեզուի: Տարբեր տարբերի ընտելացումը պետական ընդհանուր օրգանիզմին, ձեմարանը — որքան ինձ վիճակուած է եղել դիտելու իմ երկարամեայ ծառայութեան ընթացքում, — լուծել է միշտ յաջողութեամբ, պատրաստելով արժանաւոր դործիչներ ամենատարբեր ասպարէզներում ծառայելու թէ իրենց հարազատներին եւ թէ ընդհանուր հոյրենիքին<sup>10</sup>»:

ձեմարանի համբաւին եւ յաջողութեան մեծապէս նպաստել է նաեւ մի երրորդ շատ կարեւոր հանգամանք. դա այն է, որ ձեմարանը իր գոյութեան առաջին 56 տարուայ ընթացքում գտնուել է իր հիմնադիրների ու նրանց տոհմի անդամների անմիջական հեղինակաւոր ու լուսավիտ դեկավարութեան ներքոյ. եղել է նրանց մշտական խնամքի ու ջանքի տակ կողմնակի անբաղձալի միջամտութեան ամէն հնարաւորութիւն:

Այս հանգամանքը փրկել է ձեմարանը ներքին փոթորիկներից, որոնցով այնքա՛ն հարուստ են եղել մեր ազգային դպրոցները եւ որոնք այնքա՛ն աղէտաւոր անդրադարձումներ են ունեցել նրանց կրթական գործի վրայ...

Մի հեղինակաւոր ձեռք միշտ ամուր պահել է ձեմարանի կրթական ու վարչական գործերի ղեկը ու վարել այն անշեղ կերպով մի ուղղութեամբ, մի ոգով եւ սյուլիտով ապահովել նրա կրթական-դաստիարակչական գործի բնականոն զարգացման ընթացքը:

Ի հարկէ, այդ չի նշանակում, որ ձեմարանը իր կեանքի մէջ չի հանդիպել մեծամեծ բութիւն, ամէն մի աննպաստ հանգամանք յաղթահարուել է նրա ղեկավարների հմուտ ու հեղինակաւոր ձեռքով եւ ապահովուել նրա կեանքի խաղաղ ընթացքը:

Կայ եւ մի չորրորդ հանգամանք ձեմարանի կեանքում, որն ո՛չ միայն ապահովել է նրա դպրոցական գործի անխախտ զարգա-

<sup>10</sup> Տե՛ս «Լազ. ձեմարանի 75ամեակը», ուսուիրելի լեզուով:

յունն ու յաջողութիւնը, այլ եւ գրաւել է հայ եւ ուրիշ հասարակութեան լայն շրջանների համակրանքն ու վստահութիւնը, ինչպէս եւս ապահովել կառավարութեան մշտապէս բարեացակամ վերաբերմունքը, քանզի ձեմարանը երբեք կառավարութիւնից չի պահանջել նիւթական օժանդակութիւն, չի ծանրարեւոյնել կրթական նախարարութեան առանց այն էլ լղարիկ բիւջէն:

Այդ հանգամանքը՝ ձեմարանի դրամական միջոցներով միշտ ապահովուած լինելն է եղել, շնորհիւ Լազարեանների անօրինակ դոնորներող ոգու ու նրանց մշտապէս դուրս գործանքին իրենց կրթական հաստատութեան վրայ:

Ահա՛ մի հանգամանք, որից զուրկ են եղել մեր ազգային դպրոցները հայրենիքում եւ որն այնքան աղէտարեր է եղել նրանց բնականոն զարգացման համար...

Լազարեանները սկսած 1804—1864 թ. նուիրարելու են ձեմարանին՝ 662, 787 ուսուիրի արծաթ, որ թղթադրամով կազմում է չուրջ 2,000,000 ուսուիրի կըր թուով<sup>11</sup>:

Վերջապէս, կար նաեւ մի այլ շատ կարեւոր խնդիր, որի բարեյաջող լուծումը միայն կարող էր թէ՛ յարատեւել ձեմարանի գոյութիւնն եւ թէ՛ դնել այն նպատաւոր պայմանների մէջ պետական կրթական հաստատութիւնների շարքում:

Այս խնդրի լուծումով չափազանց մտահոգուած էր ձեմարանի կառուցողը՝ աղա Յովակիմ Լազարեանը: Եւ երբ նրան իր կեանքի արեւմուտքին յաջողուեց բարեյաջող լուծում տալ, նա հանդիստ սրտով գերեզման իջաւ:

ձեմարանը մասնաւոր կրթական հաստատութիւն էր. «Տեսրց Լազարեանց Հայկական դպրոց» էր եւ իրեն սյուլիտին շատ խախտու էին նրա իրաւական հիմունքները կայսրութեան դպրոցական ցանցի մէջ:

«Չնայած Լազարեան դպրոցի բարոյական նշանակութեան ու նիւթական միջոցների անընդհատ աճման, — ասում է Գէորգ Քանանեանը, — չնայած որ ձեմարանի Յովակիմ Լազարեանի սյուլիտի սպասման հետեւանքով նրա երկու աւագ որդիները օգնում էին նրան, այսու հանգերձ ձեմարանի ապագայի ապահովութեան միտքը շարունակուած էր անհանգստութիւն պատճառել հետաւոր Հոգա-

<sup>11</sup> Լազարեանների նուիրատուութիւնների մասնաբաժան հաշիւը ներկայացուած է Յաւելուածում:

բարձունքն: Դպրոցի գոյութիւնը թուում էր նրան խախտու, քանի նա շարունակում էր մնալ որպէս մի մասնաւոր դպրոց, հետեւաբար ենթակայ ամեն տեսակ պատահարների ու նրա կառավարիչների անձնական կամքից կախում ունեցող մի հաստատութիւն, քանի որ նա կը մնայ առանց որոշ օրէնքով հաստատուած Կանոնադրի, առանց իրաւունքների նրա պաշտօնեաների համար եւ պետական իշխանութեան պաշտպանութիւնից զուրկ: Այս նպատակով արուած բոլոր փորձերը վերաբերին ու անհետեւանք մնացին: Ոչ մի ծրագիր, որ նպատակ ունէր դնել ձեւաբանը կրթական միջխտութեան հովանուտակ, չունեցաւ յաջողութիւն...: Վերջապէս, միայն յոգան դնել ձեւաբանը մի որ եւ է պետական բարձրաստիճան ու ազդեցիկ անձնաւորութեան հովանաւորութեան տակ: Եւ նրանք ընտրեցին կոմս Արակչեւին, որը ժամանակի ամենահզօր պետական դէմքն էր<sup>12</sup>:

Այդ նպատակով էլ Յովակիմ աղան եւ նրա երկու որդիքը՝ Յովհաննէսն ու Սաշատուրը 1824 թ. յունիս 19ին խնդրագիր են ներկայացնում կայսեր Ալեքսանդր Ա.ին:

Այդ խնդրագրի մէջ, ի միջի այլոց, առում էր հետեւեալը.

«Ութ ամեայ փորձը ապացուցեց մեր դպրոցի իրական օգտակարութիւնը: Մեր սովորաբար սովորաբար բացի այն գիտութիւններից, որոնք սովորաբար աւանդուած են բարձրագոյն դպրոցներում, աւանդուելու են նաեւ արեւելեան լեզուներ, որով նա հանդիսանալու է միակը իր տեսակի մէջ եւ տարբերուելու է բոլոր միւս դպրոցներից: Բաց չնայ փորձը ցոյց տուեց, որ այս կրթական հաստատութիւնը, որ կազմակերպուած է առանձնայատուկ կանոններով եւ մի ուրիշ ազգի համար, պահանջում է յատուկ հովանաւոր ունենալ, ինչպէս եւ յատուկ իրաւունքներ ու կանոնադր<sup>13</sup>»:

Եւ Լազարեաններ ցանկութիւն են յայտնում ձեւաբանի հովանաւորի պաշտօնի մէջ տեսնել կոմս Արակչեւին:

Միաժամանակ նոյն իմաստով ու բովանդակութեամբ կայսեր ներկայացնում է

<sup>12</sup> Տե՛ս Գ. Գրիգորեանի ճառը «ձեւաբանի 50ամեակին» մէջ, էջ 23:  
<sup>13</sup> Տե՛ս «Լազ. ձեւաբանի 50ամեակ» Յաւելուածի մէջ, էջ 6:

խնդրագիր նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմը:

Լազարեանները դիմում են կոմս Արակչեւին ու խնդրում, որ ստանձնի այդ պաշտօնը:

Կոմսը տալիս է իր համաձայնութիւնը եւ կայսրը յատուկ հրովարտակով նշանակում է 1824 թ. նոյեմբեր 8ին, Արակչեւին ձեւաբանի Գլխաւոր պետ կամ Գլխաւոր Կառավարչապետ:

Այնուհետեւ այդ պաշտօնը ստանձնում են մի շարք ակադեմիկներ ու բարձրաստիճան պետական գործիչներ. այդ կարգը շարունակուած է մինչեւ 1872 թ., երբ ձեւաբանը վերջապէս ընդունում է ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան դպրոցական ցանցի մէջ եւ հաստատուած է նրա վերջնական դպրոցական ծրագիրն ու Կանոնագիրը, որոնցով եւ ձեւաբանը առաջնորդուած է մինչեւ իր գոյութեան վախճանը 1918 թ.ունիս:

Այսպիսով ձեւաբանի իրաւական վիճակը կարգադրուած է, որով ո՛չ միայն ապահովուած է նրա յարատեւ գոյութիւնը, այլ եւ հնարաւորութիւն է ստեղծուած նրա ճամբին պատահած բոլոր դժուարութիւնները դիւրին կերպով յաղթահարելու. դեռ աւելին, չորհիւ Կառավարչապետների յաջող ընտրութիւններին եւ նրանց բարեացակամ վերաբերմունքին թէ դէպի Լազարեաններն եւ թէ դէպի նրանց դպրոցը, վերջինս շարունակաբար ստանում է նոր իրաւունքներ ու արտօնութիւններ. հետեւանքը լինում է այն, որ ձեւաբանի գիրքը ապահովուած է ու նա ձեռք է բերում հայ եւ ռուս հասարակութիւնների համակրանքն ու վստահութիւնը:

Կոմս Արակչեւը մնում է գլխաւոր կառավարչապետի պաշտօնի մէջ մինչեւ 1827 թ. հոկտեմբեր 12ը. նրան փոխարինում է կոմս Ալեքսանդր Բենկեկորֆը՝ 1828—1844 թթ. ապա յաջորդաբար՝ Իշխան Օրլովը, որ վարում է այդ պաշտօնը մինչեւ 1860 թ. նոյն տարում նշանակուած է պետական քարտուղար գաղանի խորհրդական Վլադիմիր Բուսկովը, որին 1870 թ. յաջորդում է կրթական միջխտար կոմս Տոլստոյը մինչեւ 1872 թ. եւ լինում է վերջին գլխաւոր կառավարչապետը այդ թուին, ինչպէս ասացինք, ձեւաբանը նոր ծրագրով ու նոր ներքին Կանոնագրով մտնում է ժողովրդական լուսաւորութեան պետական դպրոցների ցանցի մէջ, որով ձե-

մաբանի իրաւական վիճակը վերջնականապէս որոշուած է ու ամրապնդուած:

ձեւաբանը այդպիսով սկսած 1824 թ. աստիճանաբար աւելի ու աւելի է զբաւում թէ կառավարութեան ուշադրութիւնն եւ թէ ռուս եւ հայ հասարակութիւնների հետաքրքրութիւնն ու համակրանքը: Այդ, ի միջի այլոց, երեւում է այն բազմաթիւ այցելութիւններից, որոնց արժանանում է ձեւաբանը սկսած կայսրից մինչեւ ակադեմիկներն ու եւրոպական դիտնականները, հայ եւ ռուս բարձրաստիճան հոգեւորականները:

Մ. Մսերեանցը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մանրամասն անուանացուցակը այն բոլոր անձանց, որոնք այցելութիւն են տուել ձեւաբանին: Այդ անուանացուցակից երեւում է, որ 40 տարուայ ընթացքում՝ մինչեւ 1855 թ. ձեւաբանը այցելել են 253 հոգի:

Մի գաղափար տալու համար թէ որքան լայն ու մեծ համբաւ է ունեցել այդ ժամանակաշրջանում ձեւաբանը առաջ ենք բերում այդ անուանացուցակից մի քանի հանրածանօթ անուններ:

1. Կայսր Նիկոլայ Ա. եւ թագաժառանգ Ալեքսանդր Նիկոլայեւիչ, հետագայում կայսր Ալեքսանդր Բ.:
2. Պարսից իշխան Սոբորով Միրզա, Փաթալի շահի թուրք, պարսից դեսպանի ուղեկցութեամբ:
3. Օսմանեան դեսպան Սալիլ վաչան իր շքախմբով:
4. Անգլիացի դեսպան լորդ Գեոնչիլը:
5. Ալեքսանդր Հոմբոլդ, գերման հռչակաւոր գիտնական եւ ճանապարհորդ իր գիտնական ուղեկիցներով:
6. Կոմս Արակչեւը:
7. Մոսկուայի մեարտպոլիտ Ֆիլարետը, մի քանի անգամ:
8. Վրաստանի էկզարխն ու Վրաց թագաւորի ժառանգ Անտոնը:
9. Կոմս Ալեքսանդր Բենկեկորֆ:
10. Լուսաւորութեան նախարար իշխան Լիվին:
11. Կոմս Սպերանսկին, որ Նիկոլայ Ա. կայսեր օրօք կազմեց Ռուսաստանի Օրէնքների հռչակաւոր ժողովածուն:
12. Մոսկուայի Համալսարանի հոգաբարձու իշխան Օրոլենսկի, ուղեկցութեամբ համալսարանի պրոֆեսորների:

13. Պարսկաստանի ռուսաց դեսպան եւ հռչակաւոր զրոյ Գրիբոնեդով:
14. Բանաստեղծ Գնէդիչը:
15. Բանաստեղծ Պուշկինը:
16. Ներդրածական խորհրդական Սուրբաբաշեւ:
17. Պատմագիր Սերգէյ Գլինկա:
18. Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսէս Ե. Աշտարակեցին:
19. Արաաքին գործոց նախարար իշխան Գորչակով:
20. Բանաստեղծ Ժուկովսկի:
21. Կոմս Պոտեմկին:
22. Իշխան Բազրատիոն:
23. Օսման վաչա հանդերձ ընկերակիցներով:
24. Վիճակաւոր Առաջնորդ Հայոց Նոր Նախիջևանի եւ Բեսարաբիայի Մատթէոս Արքեպիսկոպոս, եւսյն եւսյն:

Այս այցելութիւնները անհետեւանք չէին մնում. այցելուները մեկնում էին դո՛ւ ձեւաբանում ախրող կարգապահութիւնից, աշակերտների յառաջողութիւնից ու կրթական գործի լուսադոյն կազմակերպութիւնից: Կոմս Բենկեկորֆը, օրինակ, այցելելով 1836 թ. ձեւաբանը, ներկայացրել էր կայսեր հետեւեալ գեղոյցը:

«ձեւաբանս այս հիմնեալ ի Լազարեանց տոհմէ՝ յարատեւ ցարդ զամս 21, առանց իրիք նպաստից ի կողմանէ Տէրութեան, եւ ամենայն իրաւամբք մարթի համարել մի յօգաւարագոյն եւ յարգիւնարեր շնորհաց եղելոց ի Կայսրութեան:

«Ա եւելեան ձեւաբանս այս իրրու Կենդրոնական գլխաւոր շնորհած ազգին Հայոց՝ է իրրու պարտէյ իմն, եւ կերպաւորէ լինքեան գտ ըմանս՝ յորոց վաճառականութիւնն եւ քաղաքականութիւնն քաղէ զպատուս՝ ընտանութեամբ ընդ ժողովուրդս Ասիոյ:

«Ի ձեւաբանի աստ ընդունին վկրթութիւն մանկուեք եկեալք ի նորանուած նահանգացն Հայաստանի եւ յայլ զանազան քաղաքաց Հարաւակողմանն Ռուսաստանի. այլ առաւելագոյն հաւաստիք ընդհանուր հաւատարմութեան՝ գոր ունի ձեւաբանս այս ի Մոսկուա, մարթի համարել այն՝ զի յորովք յաջնուականացն Ռուսաց, եւ ծնողք այլոց ազգաց տան գորդիս իւրեանց յայս ձեւաբան՝ նախամեծար գոյն քան զայլսն համարելով: Ի մանկանց անտի դաստիարակելոց ի ձեւաբանիս՝ ի սկզբանէ մինչեւ ցայժմ

իրբու չորեք հարիւր անձինք մտեալ են ի Զինուորական եւ ի Գաղաքական ծառայութիւնս: Ոմանք յայնցանէ նուիրեալ են զինքեանս ուսումնական վիճակի, եւ ամենեքին հանապազորդեն ի ծառայութեան օգուտ Տէրութեան<sup>14</sup>:

Այսպէս ձեմարանի համարը տարածուել է ամենուրեք ու գրաւել հայ երեսաներին աշխարհի ամենահեռուոր վայրերից միաժամանակ հաստատուել են մասնաւոր նուիրատուութիւններով թողալուները:

ձեմարանի վարիչներն էլ խրախուսուած համակրանքի ու վստահութեան բազում արտայայտութիւններով ոչ մի ջանք չեն խնայել ոչ թաւր ձեմարանի վերելքին, բարձրացնելով աշակերտութեան կրթական մակարդակը, գրաւելով ժամանակի ամենաձեռնհաս դասատուներին եւ ապա նիւթական առատաձեռն նուիրատուութիւններով օժտել ձեմարանը կրթական անհրաժեշտ պարագաներով՝ Փիլիքական կարիւնետ, մատենադարան եւ աշակերտական յատուկ գրադարան, հանքաբանական կարիւնետ, աշխարհագրական քարտէսներ եւ այլն:

Եւ Լազարեանների այս ջանքերը, անխոնջ աշխատանքներն ու նուիրումը չեն մնացել առանց գնահատանքի՝ նրանք արժանացել են մեծամեծ պատիւների ու փառքի:

\*

Ամէն մի դպրոցի վերելքը, նրա ներքին կեանքի խաղաղ ընթացքը մեծապէս կախում ունի նրա ղեկավարի կամ ղեկավարների անձնական արժանաւորութիւններից ու բարոյական նկարագրից:

Սա մի ճշմարտութիւն է, որ կեանքի փորձառութիւնը բազմիցս հաստատու է. ամենացայտուն ապացոյցը տուել են մեր ազգային դպրոցները, մասնաւորապէս ներսիսեան դպրոցն ու Երեւանի թեմական դպրոցը:

Անկարելի է կարգաւ այդ դպրոցների պատմութիւնները առանց հոգեկան սարսուռի...

Երբ այդ դպրոցները ղեկավար-տեսուչները եղել են Ալամդարեանի, Պետրոս Ծանչեանի, Սեդրակ Մանգլինեանի նման տաղանդաւոր մանկավարժներ ու կրթական գործին նուիրուած անձնաւորութիւններ, ապա դպրոցները ծաղկել են ու տուել առատ

<sup>14</sup> Մ. Մանրեան, «Յիշատակարան», մաս Գ, էջ 89: Ընդգծումները մերն են:

հունձ, եւ ընդհակառակը խոտվայոյզ վիճակ են ապրել, երբ օրինակ, ԲԺ. Ս. Շահնազարեանի<sup>15</sup> նման մեծամիտ ու դպրոցական գործին անտեղեակ մարդիկ են եղել կանչուած ղեկավարելու կրթական դժուարին, նուրբ ու պատասխանատու գործը:

Լազարեանները այնպիսի խոր ըմբռնում են ունեցել յիշեալ մտքի ճշմարտութեան, որ սկզբից եւեթ ջանացել են տալ իրենց դպրոցին հմուտ մանկավարժներ՝ տեսուչներ, ուսուցիչներ ու դաստիարակներ. եւ միաժամանակ պահել նրանց իրենց աշխուրջ հսկողութեան տակ: Ծնորհիւ այդ հանգամանքին է, որ ձեմարանը եղել է մի հարազատ օջախ հեռուոր անկիւններից եկած հայ որբ ու չքաւոր երեսաների համար:

Բայց իւրացնել մի ճշմարտութիւն, դիտակցել մի անհրաժեշտ կարիք, դեռ չի նշանակում կարողանալ այն իրագործել, կարողանալ բաւարարել գիտակցուած կարիքը. այդ երկու հանգամանքների միջեւ եղած տարածութիւնը շատ մեծ է:

Եւ արդարեւ, երբ Յովակիմ աղան ձեմարանի հիմքը դրեց ու դպրոցը բաց արեց իր դռները հայ երեսանների համար, նա մէկէն մէկ կանգնեց հմուտ ուսուցիչներ ճարելու դժուարին խնդրի առջեւ: Չէ՞ որ այդ ժամանակ հայ իրականութիւնը չէր տալիս որեւէ հնարաւորութիւն այդ խնդրի բարեյաջող լուծման համար: Որտեղի՞ց ճարել իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնած դասատուներ ու ղեկավար-տեսուչներ:

Եւ Յովակիմ աղան ուրիշ ելք չգտաւ բացի այն, որ հարկադրուած զգաց, հակառակ իր կրօնական հայեացքներին, ղեկել Ս. Ղազարի Միթիթարեանների՝ ղեկել նախ Վենետիկ եւ ապա Վիեննա եւ խնդրել ուղարկել ձեմարանի համար երկու ուսումնական վարդապետներ<sup>16</sup>:

Վենետիկն ու Վիեննան մերժում են եւ Յովակիմ աղան մասնաւոր է անելի...

Լազարեանները, սակայն, երջանիկ ստուղի տակ էին ծնուած: Լուր առնելով, որ Ս. Էջմիածնում գտնուում է մի նախկին

<sup>15</sup> ԲԺ. Ս. Շահնազարեանը եղել է Երեւանի թեմական դպրոցի տեսուչ 1898—1899 ուս. տ. Լէօն իր Երեւանի թեմ. դպրոցի պատմութեան մէջ մանրամասն նկարագրում է այն խոտվայոյզ վիճակը, որին ենթակայ է եղել դպրոցը այդ «տեսչի» օրօք, էջ 383—418:

<sup>16</sup> Յովակիմ աղայի կրօնական հայեացքներն ու նրա՝ հանդէպ կաթոլիկ Միթիթարեանները ունեցած տրամադրութիւնների մասին, մենք արդէն խօսել ենք Յովակիմ աղայի կենսագրական մէջ:

կաթոլիկ վարդապետ, Յովակիմ աղան անմիջապէս ղեկում է կատարում եւ խնդրում, որ այդ վարդապետին ուղարկեն ձեմարանի համար: Դա՛ Սեբովբէ վարդապետն էր: Ծուտով դռնուեց նաեւ նման մի երկրորդը, դա՛ Միխայէլ վարդապետ Սալլանքեանն էր:

Այս երկու վարդապետները, մանաւանդ վերջինը, շատ խոշոր դեր են կատարել ձեմարանի կրթական գործի կանոնաւորման ու բարեկարգման մէջ, մասնաւորապէս հայագիտութեան մարզում, եւ թողել են անջնջելի հետքեր:

\*

ձեմարանի ուսուցիչներն եւ ուսուցչապետները չեն գոհացել սոսկ իրենց առարկաների դասաւանդութեամբ. զգալով դասագրքերի մեծ պակասը, յորինել են նաեւ բաղմաթիւ դասագրքեր, ձեռնարկներ, ընթերցարաններ, բառարաններ: Նրանց օրինակին հետեւել են նաեւ ձեմարանի նախկին սաները:

Այս կողմից էլ Լազարեան ձեմարանը կատարել է դնահատելի գործ. ընդհանրապէս հայ մատաղ սերունդի կրթութեան ասպարէզում, քանզի ձեմարանի ուսուցչութեան պատրաստած դասագրքերը գործ են անուել նաեւ նոյն ժամանակուայ բոլոր Հայոց դպրոցներում, որոնք տառապելիս են եղել դասագրքերի բացակայութեան ցաւով:

ձեմարանի ուսուցչութեան կազմած դասագրքերի մեծ մասը տպագրուել են ձեմարանի սեպհական տպարանում ու հրատարակուել ձեմարանի կողմից:

Մի գաղափար տալու համար, թէ այդ ասպարէզում որքա՛ն մեծ ու արժէքաւոր գործ է կատարուած, առաջ ենք բերում այդ հրատարակութիւնների ցանկը, օգտուելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից:

1. 1819 թ. «Ծաղիկ գիտութեանց», աշխատասիրեալ ի Սեբովբէ վարդապետէ ի միարանութենէ Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի, պէսս դպրոցաց Հայաստանեայց, զարգարեալ 52 պատկերօք: Ի Մոսկով, ի տպարանի Օգոստեայ Սիմոնեանց, 1819 թ.:

«Այս դասագիրքը, — ասում է Լէօն, — այդպիսի վերնագիր էր կրում այն պատճառով, որ համառօտ տեղեկութիւններ էր տալիս գիտութեան բոլոր ճիւղերից, այն է.

I. Յաղաղս այլ եւ այլ կրօնից (բնական կրօն, Կրօն Հրէից, Կրօն Գրիստոնէից, Հեթանոսութիւն, որ է դիցարանութիւն, Մասնադեպութիւն, Կռապաշտութիւն). II. Փիլիսոփայութիւն (Տրամարանութիւն, Բնաբանութիւն, Բնական վիպասանութիւն, Տնկանութիւն, Բնական վիպասանութիւն, Չափաբերական Մակացութիւնք, Աստեղարաշխութիւն). III. Աշխարհագրութիւն. IV. Պատմութիւն<sup>17</sup>:

2. 1821 թ. — Յարութիւն Բահանայ Ալամդարեան, «Համառօտ բառարան ի Ռուսաց լեզուէ ի հայ: Մոսկով, 1821:

3. 1827 թ. — «Բերականութիւն գրաբառ լեզուի Հայոց նորակարգ ոճով». ի պէսս աշակերտաց գերահռչակ ձեմարանին կառուցելոյ ի Մոսկով, ի պայտապարմ Տեարց Եղիազարեանց: Ի լոյս ընծայեաց Միխայէլ Մ. վարդապետ Սալլանքեանց Կոստանդնուպոլսեցի, միարան Սրբոյն Էջմիածնի, նուիրակ աստուածապատիւ Կաթոլիկոսի, կարյաջորդ վիճակաւոր արքեպիսկոպոսի, կարգավար (ռէքթոր) յիշեալ ձեմարանի, դատաքննիչ (ցէնզօր) տպագրելի մատենից, ասպետ եւ դասատու Աստուածաբանութեան, Փիլիսոփայութեան եւ Հայկաբանութեան: Մոսկով:

Լէօն վկայում է, որ Սալլանքեանի այս դասագիրքը դարձել էր շատ գործածական մեր ազգային դպրոցներում:

4. 1831 թ. — «Գաղափար Հայկական վայելչագրութեան», զձագրեաց Սիմէօն Սուլթանշահեանց, ի լոյս հած Հայկական ձեմարան Տեարց Լազարեանց, որ ի Մոսկով. 1831:

«Կանոնաւոր վայելչագրութիւն — գրում է Լէօն այս առթիւ, — սովորցնելու հոգսերն էլ առէր սոսաջ ունեցաւ բարեկարգուած հայ դպրոցը: Դարձեալ Լազարեան ձեմարանն էր, որ առաջին անգամ հրատարակեց գեղագրութեան օրինակներ 1831 թ.<sup>18</sup>:

5. 1827 թ. — Յակոբ Եւ Դաւիթ Արգանեաններ (ձեմարանի նախկին սաներ), «Հայոց քաղաւորութեան պատմութեան մի փորձ», Մոսկով, 1827 թ.:

6. 1831 թ. — Նոյն Սալլանքեանը հեղինակել էր կրկին Լազարեան ձեմարանի աշակերտութեան համար մի ստուար հատոր՝ «Կրօնագիտութիւն քրիստոնէական բառարան»:

<sup>17</sup> Լէօն, «Եր. թեմ. դպր. պատմ.», էջ 229:  
<sup>18</sup> Անդ, էջ 241:

- ուղղափառ դաւանութեան Առաքելական Եկեղեցոյ լուսաւորչակրօն Հայոց»։ Մոսկվա։
7. 1833 թ. — Յովսէփ Չերէֆեան (*Ճեմարանի նախկին սան, Սալլանթեանին աշակերտած*), «Սկզբունք քրիստոնէական վարդապետութեան» կամ «Համառոտութիւն Սրբազան Պատմութեան եւ Կրօնադիտութեան»։ Մոսկվա, 1833:
8. 1836 թ. — Միքայէլ Մ. Վ. Սալլանթեան, «Ճարտասանութիւն»։ Մոսկվա, 1836:
9. 1838 թ. — Աղեքսանդր Խուդաբաշեանց, «Քառարան ի հայ լեզուէ ի Ռուս»։ Լոյս է ընծայել աղա Յովհաննէս Յովակիմեան Լազարեանը, ծախսելով 72.000 ռուբլի թղթադրամ։ Տպարան Լազ. Ճեմարանի. Մոսկվա, 1838 թ. 10:
10. 1839 թ. — Յովհաննէս Եղիազարեան — Սիմէոն Աղայեանց Բայազետցի (*Ճեմարանի նախկ. աշ.*), «Քերականութիւն Հայոց լեզուի»։ Մոսկվա, 1839:
11. 1842 թ. — Յովսէփ Օրբելի (*Ճեմ. նախ. աշ.*), «Համառոտութիւն Սրբազան Պատմութեան»։ Մոսկվա, 1842:
12. 1846 թ. — Մկրտիչ Էմին, «Գրաբարի Քերականութիւն»։ Մոսկվա, 1846 թ.:
13. 1849 թ. — Մկրտիչ Էմին, «Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց Հայոց, հանդերձ բառագրովք ի Հայկականէ ի Ռուսաց բարբառ ի պէտս աշակերտաց Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց»։ Մոսկվա, ի տպագրատան նորին Ճեմարանի, 1849:
14. 1851 թ. — Ստեփաննոս Նազարեանց, «Յաղագս փորձական հոգեբանութեան հառ», գրաբար, բայց գրական-պատմական ներածութեամբ աշխարհարարի գրական զարգացման կարեւորութեան մասին, որպէս հայերի լուսաւորութեան համապատասխան միջոց ներկայիս։ Մոսկուա, 1851. Եր. ԺԸ + 80:
- Այս գիրքը տպագրուած է Լազարեանների ծախսով եւ նուիրուած է վաղամեռիկ մանուկ Յովհաննէս Խաչատրեան Լազարեանի յիշատակին:
15. 1853 թ. — Ստեփաննոս Նազարեանց, «Առաջին հոգեդէն կերակուր հայագգի երեսաների համար», 1853 թ.:

<sup>10</sup> «Արեւելի ժողովածու»ի մէջ ծախսը ցոյց է տրուած աւելի պակաս գումար՝ 50.000 ռուբլի թղթադրամ:

16. 1853 թ. — Ստեփ. Նազարեանց, «Վարդապետարան Կրօնի», հասարակաց հայախօսութեամբ, Մոսկուա, 1853 թ.:
17. 1857 թ. — Ստեփ. Նազարեանց, «Ընթերցարան», ժողովածու թարգմանական եւ ինքնուրոյն յօդուածների, աշխարհարար։ Մաս Ա, 1857 թ. եւ Մաս Բ. 1858 թ.:
18. 1850 թ. — Մսեր Մսերեանց, «Հայոց եկեղեցոյ հաւատոյ Հանգանակ», ընդարձակ, գրաբար, Մոսկուա:
19. 1850 թ. — Նոյնը, համառոտ, գրաբար:
20. 1850 թ. — Նոյնը, համառոտ, աշխարհարար:
21. 1859—1862 թ. — Նոյնը լրացումներով ու յաւելումներով 2րդ եւ 3րդ հրատարակութիւն:
22. 1850 թ. — Մսեր Մսերեանց, «Նոր Ուխտի Սրբազան Պատմութիւն», համառոտ, աշխարհարար. Մոսկուա, 2րդ տպագրութիւն 1861 թ.:
23. 1861 թ. — Մսեր Մսերեանց, «Ընդարձակ Հրահանգ Հայոց եկեղեցոյ», Աշխարհարար. Մոսկուա:
24. — — Մսեր Մսերեանց, «Հրահանգ հարստասանութեան», ի պէտս աշակերտաց, Չեռագիր:
- Լէօն վկայութեամբ Մ. Մսերեանի կրօնի դասագրքերը տարածուած էին համարեա ամէն տեղ եւ շատերը բազմաթիւ տպագրութիւններ ունեցան:
25. Գաբրիէլ Երիցփուխով (*Ճեմ. նախկ. սան.*), Ռուս-Հայկական բառարան. Թիֆլիս:
26. 1859 թ. — Զարմայր Մսերեանց, «Հայերէն պատկերազարդ Այբբեմարան», Մոսկուա:
27. 1863 թ. — Զարմայր Մսերեանց, «Հայ եւ Ռուս Այբբեմարան»։ Մոսկուա:
28. 1856 թ. — Ոսկան Յովհաննիսեան (*Ճեմ. նախկ. սան*), «Պատմութիւն Հայաստանի, Սմբատի»։ Մոսկուա, 1856:
29. 1858 թ. — Ոսկան Յովհաննիսեան, «Պատմութիւն Հայաստանի, Կիրակոսի»։ Մոսկուա, 1858 թ.:
30. 1855, 1856, 1858 եւ 1859 թ. — Ոսկան Յովհաննիսեան, «Հայաստանի նոր քնար», Երգերի եւ բանաստեղծութիւնների ժողովածու:
31. — — Ոսկան Յովհաննիսեան, Պարսկերէն լեզուի դասագիրք:

32. 1872 թ. — Միքայէլ Միանաբեան (*Ճեմ. նախկ. սան*), «Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան սրատմութիւնն ու տեսութիւնը. ծրագրական փորձառութիւն հանդերձ դանազան ծանօթութիւններով, յաւելումներով եւ գրասեղանների ու անատմական ստուերադրերով։ Պետերբուրգ:
33. 1873 թ. — Միքայէլ Միանաբեանց, «Հայկական կանոնաւոր եւ վայելուչ գրութիւն։ Լայպցիգ:
34. — — Հրատարակութիւն Միքայէլ Միանաբեանցի, «Ազգային կրթութիւն», հրատարակական ընթերցանութիւնքէդուարդ Լարուէի. թարգ. Մ. Տէր Գրիգորեանի:
35. 1868 թ. — Հրատարակութիւն Մ. Միանաբեանցի, «Սնամատարութիւն երեսուցոց մարմնական եւ բարոյական», շարադրութիւն Կոմբի, անդլիցոց թագուհու Թէլի եւ Էդինբուրգի արքունի Թէլիական համալսարանի անդամի։ Պետերբուրգ:
- Մ. Միանաբեանցի այս հրատարակութիւնների առթիւ Լէօն գրում է.
- «Դասագրքերի հրատարակութեան ուղղութեամբ մեծ գործ է կատարել Մ. Միանաբեանցը, որ հայ դպրոցական գործին անմիջապէս մասնակից չէ եղել, բայց այդ գործին սիրահար էր։ Նա մի զինուորական էր, ծին սիրահար էր։ Նա մի զինուորական էր, որ 1860 թուականներին եւ 1870 թուականներին սկզբներում մի շարք գնահատելի հրատարակութիւններ արաւ, որոնք նուիրուած են դպրոցական եւ մանկավարժական հարցերին։ Այդ համեստ մշակն էր, որ առաջին անգամ մտքեց մեր դպրոցները գծած տետրակների գործածութիւնը, որ այժմ տարածուած է ամէն տեղ։ Նախ եւ առջ նա հրատարակեց մի ամբողջ հատոր գրութեան արուեստին եւ նրա ուսուցման գործին նուիրուած։ Ապա լայպցիգում տպագրել տուեց իր հեղինակած օրինակները եւ առանձնապէս գծած տետրակներ՝ աշակերտների գործածութեան համար<sup>20</sup>»:
- Բայց Ճեմարանը չէր բաւարարում միայն դասագրքեր կազմելով ու հրատարակելով։ Հեղինակները աշխատում էին նաեւ մտցնել նոր, աւելի դիւրին մեքոններ, մանաւանդ գրագիտութեան գործում։
- «Հայ դպրոցներում, — ասում է Լէօն, — ծեծն էր որ տանում էր աշակերտին դպրոց եւ հարկադրում էր նրան սովորել։ Տանջանք եւ հարկադրում էր նրան սովորել։

<sup>20</sup> Տէլի Լէօն, «Պատմ. երեւանի թեմ. գրք.», էջ 242:

ներով իւրացնելով գրավարժութիւն, աշակերտը անցնում էր աւելի անհարկաւոր, աւելի բթացնող վարժութիւնների վանկերով, զիր կապելով, կարգալ ամբողջ մի կանոն Սաղմոս, ապա ժամագրքի աղօթքների մէջ ղեգերել:

«... Գրագիտութիւն ուսուցանելու սխալներն էլ մեր աւանդական Այբբեմարանից կամ «Քերականից հետոյց» չէր. գոնէ դեռ 1842 թ. Լազարեան Ճեմարանի տպարանից հրատարակուած է Սաղմոսի առաջին կանոնը, վանկերի բաժանուած, երեսաներին սովորեցնելու համար<sup>21</sup>»:

Չենք յիշատակում այն բազմաթիւ մեծարժէք գիտական ուսումնասիրական աշխատանքները, գրական-գեղարուեստական երկասիրութիւնները, որոնց հեղինակներն են եղել Ճեմարանի նախկին սաները. նրա ուսուցիչներն եւ ուսուցչապետները՝ հայերէն, ռուսերէն, վրացերէն, պարսկերէն, թուրքերէն եւ եւրոպական լեզուներով, նախ, որովհետեւ այդ աշխատանքների մանրամասն կերպով բերուած է Լազ. Ճեմարանի 50ամեացանկը բերուած է Լազ. Ճեմարանի Լիկին եւ ապա մանաւանդ Լազ. Ճեմարանի Լիկինի 30ամեակին նուիրուած հրատարակութիւնների մէջ. բացի այդ, մեր ներկայ աշխատանքների շրջանակներից դուրս գործ է միաժամ անակ «Հանդէս Ամսօրեայ»ի սուղ էջերը չեն թոյլատրում այդ:

Մենք սահմանափակուեցինք դասագրքերի հրատարակութեան խնդրով եւ այն էլ Ճեմարանի առաջին 50ամեակում լոյս տեսած, քանզի այդ ժամանակաշրջանում էր, որ դասագրքերի խնդիրը հրատապ ընդթէր կրում եւ նրանց պակասը չափազանց աննպաստ անգրագրած մեքեր էր ունենում ընդհանրապէս հայ դպրոցական գործի վրայ։ Շեշտեմք մի անգամ էլ որ Լազարեան Ճեմարանը ժամանակի հայ դպրոցների համար կեցական նշանակութիւն ունեցող այդ գործի մէջ բերել է իր քանկապին օժանդակութիւնը, կատարելով գերազանցօրէն մշակութային անգնահատելի աշխատանք:

\*  
Լազարեանները, որպէս Ճեմարանի կրթական գործի ղեկավարներ, մի գարնանակի հոտառութիւն ունէին զգալու նրա ստորեայ կեանքի կարիքների պահանջը եւ ապա շտապ

<sup>21</sup> Անդ, էջ 230—232:

պել անմիջապես բաւարարել այն, որպէս զի ձեւարանը չտուժի որեւէ պակասից:

20ական թուականներին նրանք զգացին, որ ձեւարանը անհրաժեշտ կարիք ունի սեպհական տպարանի եւ որ այդ տպարանը կարող է նաեւ խոշոր գործ կատարել ազգային մտքի լուսաւորութեան համար:

Եւ ահա՛ նրանք՝ հոգարարձու Յովհաննէս աղան եւ նրա եղբայր Սաչատուր աղան, որ այդ ժամանակ վերատեսչի պաշտօնն էր վարում, միասնաբար հիմնում են սեպհական տպարան ձեւարանին կից եւ այդ նպատակով յատկացնում են իրենց սեպհական միջոցներէ 30.000 ուրբի թղթադրամ:

Հիմնելով տպարանը, նրանք ջանք չեն խնայում դնելու այն այնպիսի մի բարգաւաճ վիճակում, որպէս զի նա ընդունակ լինի արժանաւոր կերպով կատարել իր ընդհանուր մշակութային գերը եւ ապա կարողանայ ձեւարանի բոլոր պէտքերը լրացնել:

Նոր նուիրատուութիւններով, որոնց ընդհանուր գումարը կազմում է 70.662 ուրբի թղթադրամ նրանք ձեռք են բերում եւ օժտում տպարանը գրեթէ բոլոր լեզուներով տառեր՝ հայերէն, ռուսերէն, լատիներէն, յունարէն, Փրանսերէն, գերմաներէն, իտալերէն, անգլիերէն, հունգարերէն, վրացերէն, տաճկերէն, պարսկերէն եւ անգամ սերբերէն: j

Այդ օրերին Մոսկուան չունէր նման մի հարուստ եւ բոլոր յարմարութիւններով օժտուած տպարան:

Լազարեանները պահել են իրենց ձեռքում տպարանը մինչեւ 1858 թ. այսինքն՝ 29 տարի, այնուհետեւ կապալով տուել են Պրոֆ. Մ. Էմինին:

1863 թ. տպարանի կառավարութիւնը Լազարեանները յանձնել են Մամոնտովին եւ բերել է ձեւարանին տարեկան 1610 ուրբի եկամուտ:

«ձեւարանի գործունէութիւնը, — ասում է Պրոֆ. Զինովիւրը, — յօգուտ Հայոց ազգի մտաւոր յառաջադիմութեան չի սահմանափակում սոսկ ձեւարանի չորս պատերով: Ունենալով սեփական տպարան, ձեւարանը իր ծախքով հրատարակել է զանազան հանրօգուտ գրքեր եւ դասագրքեր հայերէն լեզուով: Ժամանակ առ ժամանակ նա ուղարկել է այդ գրքերը միանգամայն արի (ընդգծ. մերն է) Հայոց դպրոցներին: Վերջին ութ տարուայ ընթացքում (1855—1863 թթ.)

այդ ձեւով ուղարկուած են դպրոցներին եւ զանազան անձանց շուրջ 2242 օրինակ գրքեր եւ 295 հատ դիմանկարներ, բնութեան տեսարանների նկարներ, փորագրութիւններ եւ այլն: Բացի այդ, նուիրարեւուած է Մոսկուայի Հասարակաց Թանգարանին եւ մատենադարանին՝ 80 օրինակ գիրք, 18 դիմանկարներ եւ 4 հատ վիճատիպ բնութեան տեսարաններ<sup>22</sup>»:

Որեւէ հնարաւորութիւն չկայ թուելու այն բազմաթիւ հրատարակութիւնները, որոնք լոյս են ընծայուած Լազարեանների տպարանից նրա գոյութեան ընթացքին: Այդ տպարանում են տպագրուել ձեւարանի աշակերտների, ուսուցիչների եւ ուսուցչապետների գրական-գեղարուեստական երկերը, բանասիրական, լեզուագիտական եւ ամէն կարգի գիտական բազմաթիւ ուսումնասիրութիւններ:

Յիշատակենք միայն մի քանի մեծարժէք հրատարակութիւնների անունները, որոնցից մի քանիսը միայն ձեւարանի տպարանում կարող էին տպագրուել, որպէս ժամանակի ամենարարգաւաճ եւ միակ տպարանը, որ ունէր բոլոր արեւելեան լեզուներով տառեր.

1. 1836 թ. «Պօլօժնիէ»-ն հայերէն լեզուով, թարգմանութեամբ Միքայէլ արքեպ. Սալլանթեանի:
2. Ալ. Սուղարաշեանի «Բառարան ի հայ լեզուէ ի Ռուս», 1838 թ.:
3. «Հայ Ժողովուրդի պատմութեան տեսութեան վերաբերող ակտերի Ժողովածուն» (1833—1838 թթ. ռուսերէն լեզուով):
4. «Լազարեան ձեւարանին վերաբերող բարձրագոյն հրովարտականի ու հրամանագրերի Ժողովածու» (1839 թ. ռուսերէն):
5. «Ճառեր եւ հաշուետուութիւն, արտասանուած Լազարեան ձեւարանի Արեւելեան լեզուաց 50ամեակի առթիւ տեղի ունեցած հանդիսաւոր հաւաքոյթին»: Մոսկուա 1865 (ռուսերէն):
6. «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայագատաց Լազարեան տոհմի». Ծարագրեալ ի Մսերայ Մագիստրոսէ եւ ասպետէ Գրիգորեան Մսերեանց: Մոսկուա, 1856 թ. (հայերէն):

<sup>22</sup> Տե՛ս Պրոֆ. Ալեքեյ Զինովիւր, «Պատմական ուրբագրի Լազ. ձեւարանի, Լազարեանների համառոտ կենսագրականներով», 1863 թ. Մոսկուա, Տպարան Լազ. ձեւ.:

Եթէ ճիշտ է, որ առհասարակ ամէն մի գործի մէջ հանրային կեանքի բոլոր ասպարէզներում բացակայում է նպատաւոր միջնորդ, չկայ դադարաւարական ոգի ու խանդավառութիւն, ապա այդ գործը չի կարող տալ լեզմնաւոր արդիւնքներ, ապա այդ բացարձակ ճշմարտութիւն է կրթական գործի մէջ:

Յայտնի է, որ այն դպրոցները, ուր իշխել է բիւրոկրատական ոգին, ուր չոր ու ցամաք ձեւակաւութիւնների պահպանութիւնն է եղել զեկավարող սկզբունքը, այդ դպրոցները չեն տուել շօշափելի արդիւնքներ:

Լազարեան ձեւարանը, բարեբախտաբար, նման դպրոցների շարքից դուրս է մնացել:

ձեւարանի կառուցողը, նրա երկրորդ հիմնադիր Յովակիմ աղան առաջին իսկ օրուանից ստեղծել է իր դպրոցում այն ազդասիրական-հայրենասիրական միջնորդը, ներշնչել այն սէրը դէպի ազգն ու նրա մշակոյթը՝ լեզուն, պատմութիւնը, գրականութիւնն ու կրօնը, որն այնուհետեւ աւանդաբար պահպանել են նրա որդիները եւ ապա կտակել ձեւարանի ուսուցչական ու վարչական կազմերին, հայ թէ ռուս:

Լազարեանները նոյն իսկ իրենց պաշտօնական գրութիւնների մէջ, ուղղուած կառավարական բարձր շրջաններին, երբեք առիթ չեն փախցրել իրենց ձեռքից ասելու ու շնորհակալու, որ ձեւարանը Հայոց դպրոց է իր միանգամայն առանձնայատուկ պայմաններով: Եւ կառավարութիւնը իւրացրել է այդ տեսակէտը եւ ըստ այնմ էլ վերաբերուել:

ձեւարանի ազգային բնոյթի պահպանման մեծապէս նպաստել է նաեւ այն, որ նրա բեկորները, վերատեսուչներն կամ տեսուչները մեծ մասամբ եղել են անուանի եւ ազգային հայ մարդիկ, իսկ Հայոց լեզուի ու կրօնի դասատուները նոյնպէս ազգային ոգով ներշնչուածներ եւ կարողացել են պատուաստել այն նաեւ աշակերտութեան<sup>23</sup>:

Այդպիսիք են եղել, օրինակ, Սերովբէ վարդապետը. Սալլանթեանը, Մկրտիչ Էմինը, Գէորգ Քանանեանը, Մսեր Մսերեանցը, Սմբատ Շահազիզը, Մանուկ Սարգսեանը, Ստեփաննոս Նազարեանցը, Մի-

<sup>23</sup> ձեւարանի կանոնագրի մէջ՝ հիմնադիրների ցանկութեամբ, պատման է դրուած, որ նրա անօրէններից մէկը՝ վերատեսուչը կամ տեսուչը պիտի լինի ծագումով հայ: Այս պայմանը պահպանուած ու գործադրուած է ձեւարանի ամբողջ գոյութեան ընթացքում:

քայլէ Նալբանդեանը, Յարութիւն քահ. Պոպովեանը, Կարապետ Կուսիկեանը եւ մի շարք ուրիշները:

Թէ որքան կենդանի ու անխախտ է պահպանուել ձեւարանում ազգային ոգին եւ ու մարդասիրական վերաբերմունքը դէպի հայ երեխաները, ցոյց են տալիս հետեւեալ դէպքերը:

80ական թուականների վերջերքին, Գէորգ Քանանեանի վերատեսուչութեան օրօք եւ մեր աշակերտութեան ժամանակ, ձեւարանից շատ սակաւ, բացառիկ դէպքերում էին գիշերօթիկ հայ երեխաներից վտարում ձեւարանից, իրենց չարութիւնների կամ անյառաջադիմութեան համար, թէեւ յաճախ էին լինում ուսուցիչների ու դաստիարակների կողմից նման առաջարկներ:

Այդպիսի դէպքերում, ինչպէս եւ անձամբ լսել եմ հայ եւ ռուս ուսուցիչներից, Քանանեանը միշտ բողոքել է եւ արդելք եղել, ասելով՝

«ձեւարանի հիմնադիրները՝ Լազարեանները՝ — յաճախ ասելիս է եղել Գէորգ Քանանեանը, — այս ձեւարանը բաց անելիս, նպատակ են ունեցել բերել ամենահեռաւոր դիւղերից հայ երեխաներ, կրթել նրանց, դաստիարակել եւ ապա վերադարձնել իրենց հայրենիքը, որպէս պիտանի մարդիկ. նրանք պէտք է տարածեն լոյս ու գիտութիւն իրենց յետմնաց դիւղերում: Հիմնադիրների այդ վեճ նպատակից անթոյլատրելի չեղում ու նրանց կտակին հակառակ գործ պիտի լինէր, եթէ մենք սկսէինք դիւրին կերպով ձեւարանից դուրս նետել երեխաներին իրենց ուսումը չաւարտած ու պատշաճ դաստիարակութիւն չստացած. Գուց ի՞նչ էք սպասում այդ հեռաւոր անկիւններից, տգէտ միջավայրերից եկած գիւղացի երեխաներից: Մենք ջանք չպիտի խնայէինք նրանց ուղիղ ճամբի վրայ դնելու համար եւ ո՛չ թէ մեր աշխատանքը դիւրացնելու նպատակով յետ ուղարկենք երեխաներին այնտեղ, որտեղից որ նրանք եկել են»:

Մի ուրիշ ուշագրաւ դէպքի մասին հազորում է Երուսնդ Շահազիզը, Միքայէլ Նալբանդեանի կենսագրութեան մէջ:

«ձեւարանի աշակերտներից մէկը պատմում է հետեւեալը իր եւ իր դասընկերների տպաւորութիւնների մասին, ստացած Միքայէլ Նալբանդեանից:

«Ես երբորդ դասարանի աշակերտ էի, երբ ձեմարանի առաջին երեք դասարանի Հայոց լեզուի ուսուցիչ Յովհաննիսեանը (Ոսկան Տէր-Գրիգորեանը) թողեց իր պաշտօնը եւ լուր տարածուեցաւ, որ Սաշատուր աղայի առանձին հաճութեամբ այդ պաշտօնին նշանակուել է Նախիջեւանցի Միքայէլ Նալբանդեանը: Մենք օր է ց'օր սպասում էինք նորան, որովհետեւ նոր ուսուցիչը դեռ Պետերբուրգումն էր: Մէկ օր էլ յանկարծ էմինի հետ դասարան մտաւ մի բարակ-բարակ, միջին հասակով երիտասարդ: Տեսուչը նորան ծանօթացրեց մեզ հետ, յայտնելով, որ այսուհետեւ նա պէտք է մեզ Հայոց լեզուի դաս տայ: Մեր առաջ կանգնած էր Միքայէլ Նալբանդեանը: Ընթացքը խոստովանած նրա չոր կազմուածքը, դէմքի խոժոռ դժագրութիւնը, սափրած ընչացքով ու մօրուքով երեսը եւ կարճ Փրակը առաջին նուազ շատ էլ ախորժելի սպաւորութիւն չարին մեր վրայ: Բայց այդ անխորժութիւնը շարունակուեցաւ մինչեւ տեսչի նորան մեզ ծանօթացնելու պաշտօնական ծիսակատարութեան վերջնալը, որովհետեւ երբ որ տեսուչը գնաց եւ նա ամբողջ բարձրանալով, սկսաւ իր առաջին դասը, նա կերպարանափոխուեցաւ. նրա առանց այն էլ փայլուն աչքերը կրակով լցուեցան եւ երեսը մի այնպիսի գեղեցիկ ու զբաւիչ արտայայտութիւն ստացաւ, որ իսկոյն յախտակեց մեր սիրտը եւ ընդ միշտ կապեց մեզ իւր հետ: Նա խօսում էր ազատ այն ժամանակուայ մաքուր աշխարհաբարով, չէր կմկում, չէր կակազում. նա բառերը հնչում էր մաքուր առողանութեամբ եւ, որ գլխաւորն է, նախադասութիւնները շատ ճարտարութեամբ կոկում էր եւ միտքը յայտնելու համար բառեր ու ոճեր չէր որոնում:

— «Տղայ՛ի, քողկեմ գրաբարը. այսուհետեւ մենք աշխարհաբար պիտի քոկեմք», — այս խօսքով նա սկսաւ իւր դասախօսութիւնը: Եւ մենք սկսանք աշխարհաբար սովորելը»:

«Մէկ անգամ ես, — շարունակում է իր խօսքը նոյն աշակերտը — օր արդէն զբարարի ճաշակը մասամբ առել էի, հարցրի.

«Վարժապետ, ապա մենք ե՞րբ պէտք է քերականութիւն, գրաբար ոճեր սովորինք»:

— «Ոմեր սովորելը մի ապարդիւն աշխատանք է, իսկ քերականութիւնը միայն

միջոց է եւ ո՛չ նպատակ», — պատասխանեց նա եւ սկսաւ այդ նիւթի վրայ երկար խօսել: — «Մենք պիտի է Հայերէն մտածել սովորեմք, — ահա՛ մեր ուսումնաբի գլխաւոր նպատակը», — ասում էր նա<sup>24</sup>»:

Եւ այս ամէնը միայն մի տարուայ ուսուցչական գործունէութեան ընթացքում...

Եր. Շահազիզը իր նոյն երկի մէջ, կանգ առնելով այն գործօնների վրայ, որոնք 50-ական թուականներին վառ էին պահում ազգային ոգին թէ ձեմարանում եւ թէ Մոսկուայի հայ հասարակական կեանքի մէջ, գրում է.

«Թիֆլիսը՝ շնորհիւ Ներսիսեան գալոցի եւ նրա ուսումնաւարանների, շնորհիւ մայրաքաղաքից վերադարձած կրթուած երիտասարդների դեռ նոր էր միայն սկսել հայկական կեանքի մտաւոր ասպարէզում նշանակութիւն ունենալ: Մոսկովումն էր Լազարեան շրջանը, Մոսկովումն էին սպրում Մսերը, էմինը, Նազարեանը, որոնք այդ ժամանակուայ Հայոց մտաւոր կեանքի փայլուն աստղերն էին համարուած: Նազարեանը առաջ իրբեւ ձեմարանի ուսուցիչ, յետոյ իրբեւ համալսարանի ազատ ունկնդիր, ծանօթացաւ ձեմարանի կեանքին, մտաւ հայ հասարակութեան մէջ եւ բնականապէս մօտեցաւ թէ գործիչներին եւ թէ ուսանողութեան: Լազարեան ձեմարանը, որտեղ ժողովուած էին Հայոց աշխարհի ամէն կողմից երեխաներ, որտեղ անմահ հիմնադիրների անհուն հոգացողութեամբ խնամուած էր հայկական կեանքը եւ պահպանուած հայկական ոգին<sup>25</sup>»:

Լազարեան ձեմարանում տիրող ազգային ոգու զարգացմանն ու պահպանմանը ո՛չ պակաս չափով նպաստել են հէնց իրենք ձեմարանի սաները, մասնաւորապէս Լազարեանների որդեգիրները՝ թուով 30—44 հոգի»:

Հաւաքուած Հայոց աշխարհի խուլ անկիւններից, նրանք բերել էին իրենց հետ հայ նահապետական ընտանիքների սովորութիւնները, ազգային աւանդութիւնները հայրենիքի կարօտը, որոնցով եւ վարակուած էին միւս աշակերտներին:

ձեմարանի հայկական մթնոլորտը բարերար ազդեցութիւն էր ունեցել աշակերտ-

<sup>24</sup> Տե՛ս Եր. Շահազիզ, «Միքայէլ Նալբանդեանի կենսագրութիւնը», էջ 46—47, 48. ընդգծումները մերն են: <sup>25</sup> Անդ, էջ 51:

ների վրայ, թէ ձեմարանում եղած նրանց ժամանակ եւ թէ իրենց հետագայ հասուն կեանքի ընթացքում:

Եւ այդ արտայայտուել է ամենից առաջ նրանց գրական ստեղծագործութեան մէջ:

Արդէն 1829 թ. Մ. Սալլանթեանի նահաճեանութեամբ ձեմարանի աշակերտները հրատարակում են իրենց գրական փորձերը մի յատուկ ժողովածուի մէջ՝ «Մուգայի Արարատեան» խորագրով:

Այնուհետեւ գալիս են աշակերտների բազմաթիւ ներբողական ձօները, նուիրուած Լազարեաններին զանազան ուրախ թէ տխուր ստիժներով<sup>26</sup>:

Ապագայ ախանաւոր բանաստեղծ եւ ձեմարանի Հայոց լեզուի դասատու Սմբատ Շահազիզը, դեռ ճրգ/դասարանի աշակերտ գրում է իր «Ազատ ժամեր» խորագրով բանաստեղծութիւնները, որոնք յետոյ՝ 1860 թ. լոյս են տեսնում առանձին գրքիկով:

Աւանդական սովորութիւն էր, որ աշակերտութիւնը հրատարակում էր իր ձեռագիր հանդէսները՝ շարաթաթերթեր, ամսաթերթեր. մի սովորութիւն, որ շարունակուել է ձեմարանի գոյութեան ամբողջ ընթացքում:

Իսկ թէ ձեմարանի ուսումնաւարտները ինչպիսի՞ առատ հունձք են տուել հայ ազգային մշակոյթին, այդ, ի հարկէ, հնարաւոր չէ՛ մէկ ու մէկ յիշատակել:

Մի ազատ դադափար կարող է տալ ձեմարանաւարտների անուանացանկը, որ կցուած է այս աշխատանքին:

\*

Աւարտելով մեր ընդհանուր տեսութիւնը, կորափակում ենք այն հեղինակների վկայութիւններով, ուր ընդհանուր ամփոփ հայեացք է ձգուած ձեմարանի հիմնադրման շարժառիթների, հետագայում նպատակների ու կատարած դերի վրայ մեր ազգային մշակոյթի զարգացման գործում:

Այստեղ մենք նախապատուութիւնը տալիս ենք, նախ, ձեմարանի վերատեսուչ Գեորգ Քանանեանի եւ ապա առաջ բերում մի նորագոյն վկայութիւն, որ պատկանում է Խ. Հայաստանի գրող Գ. Ստեփանեանին:

«Ըստ իր ժամանակի եւ ըստ իր ծագման — ասում է Գ. Քանանեանը, — ինչպէս եւ

<sup>26</sup> Մ. Մսերեանը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մի շարք նման գրութիւններ: Տե՛ս Գ. մաս, ԳԼ. երրորդ:

ըստ իր հետագայ ճակատագրի, ըստ իր գաղափարի եւ նպատակների, որոնք գրուած էին ձեմարանի հիմնադիրների կողմից, մեր դպրոցը հանդիսանում է մի անօրինակ երեւոյթ Կայսրութեան կրթական հաստատութիւնների շարքում: Եւ արդարեւ, հնարաւոր է արդեօք մատնանշել մի այլ դպրոց, որն 3/4 դար առաջ կեանք ստանար շնորհիւ մի տոհմի առատաճեանութեան եւ ապա ինքն իր մէջ սնուելով, հայթայթէր այնքան կարողութիւններ, որ հասնէր այն չափերի ու կայունութեան, որը նա ունի այսօր<sup>27</sup>: Կարելի՞ է, արդեօք, բերել մի ուրիշ դպրոցի օրինակ, որը պարփակէր իր մէջ այնքան իրարեց տարբեր նպատակներ եւ ապա հետեւելով կայսրութեան մէջ զարգացող կրթական բոլոր սխառններին, անշեղ ու անխախտ կերպով իրագործէր այդ նպատակները երեք քառօրե դար եւ այդպիսով յաւերժացներ հիմնադիրների թողած աւանդներն ու կամքը: Կարելի՞ է, արդեօք, գտնել մի տեղ, ուր միեւնոյն տոհմից գործիչների մի երկար շարք, որոնք յաջորդաբար մէկը միւսի յետեւից, սրբութեամբ պահելով հայրերի ատենից, նուիրէին իրենց հարազատ հիմնարկութեան ո՛չ միայն իրենց դրամական միջոցների յաւելաւը, այլ եւ իրենց հոգին, եռանդն ու անձնական աշխատանքը: Վերջապէս, կարելի՞ է մատնանշել մի այլ դպրոցում մի այնպիսի երեւոյթ, որ հաւաքելով իր հովանու տակ ամենատարբարական գիտելիքներից ու դաստիարակութիւնից գուրկ երեխաներ, եւ դպրոցը հասնէր այնպիսի՛ մեծ արդիւնքների, որպէս զի բնութեան ծոցում սնուած այդ երեխաները, իրենց հետագայ զարգացման ընթացքում, կարողանային մրցել իրենց ընկերների հետ, որոնք չընկալուած են ծնողական հոգատարութեամբ եւ իրենց մտաւոր զարգացման համար ունին բոլոր նպաստաւոր պայմանները:

«Ստեղծելով իրենց դպրոցը, — որին հաղիւ 12 տարի անց իր հիմնադրութեան օրից վիճակուած էր վերածուելու Արեւելեան լեզուների ձեմարանի, — մեծահոգի հիմնադիրները ոգեւորում էին մղումներով, — թէեւ ճիշտ է ո՛չ իբր նման մղումներով, — բայց հաւասարապէս վե՛հ ու աղնիւ:

«Նրանց ղեկավարող հիմնական սկզբունքը

<sup>27</sup> Այս ճառը ասուած է ձեմարանի 75ամեակի հանդիսաւոր հաւաքոյթին 1890 թ., Տե՛ս «Լազ. ձեմ. 75ամեակը» հրատարակութեան էջ 1—3:

մնում է, ի հարկէ, նոյնը՝ դպրոցը լինի լուսաւորութեան մղիչ ոյժ իրենց հայրենակիցներին համար, որոնց կարիքները շատ լուծանօթ էին նրանց եւ իրենց սրտին շատ մօտ էին ընդունում:

«Ինչպիսի այս մարդասիրական գերը Լազարեաններին մղում էին՝ նրանց հասարակական բարձր դիրքը, նեւթական լայն միջոցները եւ, վերջապէս, նրանց կենդանի, դեռ եւս չթուլացած կապը կրօնով, լեզուով ու ծագումով իրենց մօտիկ ազգաբնակիչութեան հետ, նրա կարկառուն ներկայացուցչիչներին հետ, հոգեւոր թէ աշխարհիկ, Կովկասում, Անդրկովկասում եւ ամբողջ ասիական Արեւելքում:

«Ընդհանուր կրթութիւն տալով իրենց հայրենակիցներին երախաներին, միաժամանակ տալ նրանց իրենց մայրենի լեզուի ու կրօնի հիմնաւոր գիտելիքներ՝ եղել են նրանց ջերմ ու անանդական ցանկութիւնը:

«Բայց Լազարեան տոհմը, խորապէս նուիրուած մեծ Ռուսաստանին, որ դարձել էր նրա համար մի նոր հայրենիք, ցանկացաւ օգտակար լինել նաեւ նրան, այսպէս ասած՝ հարազատ դարձնել նրան՝ իրենց ստեղծուելիք կրթական հաստատութիւնը: Եւ մենք տեսնում ենք, որ նրա գոյութեան առաջին իսկ տարիներից սկսած, ձեւարանի դռները սիրալիորէն բաց են բոլոր երեխաների համար, առանց կրօնի ու ցեղային խտրութեան:

«Բայց կար եւ մի այլ միտք, որ գիտակցում էր պարզ ու յստակ կերպով եւ որը դրուած էր ստեղծուող դպրոցի հիմքում:

«Ասիական Արեւելքը, որի հետ Լազարեան տոհմը կապուած էր անջնջ յիշողութիւններով, մօտենում էր աստիճանաբար կայսրութեան: Բացում էր նոր ընդարձակ դաշտ ուսական ազդեցութեան համար: Ձէնքի յաղթանակները պէտք էր ամբապնդել քաղաքակրթութեան ազդեցութեամբ: Հերթական խնդիր էր դարձել նոր ասիական երկիրների ուսումնասիրութիւնը, խաղաղ շփման միջոցներ հաստատել ասիական ցեղերի ու ժողովուրդների հետ: Գրաւել էր թուում ունենալու Կայսրութեան սրտում մի այնպիսի կրթական կենտրոն, որը միաժամանակ բաւարարէր թէ կայսրութեան կարիքներին եւ թէ տոհմային անանդներին: Արեւելեան լեզուների ուսումնասիրութիւնը կազմեց նոր դպրոցի հիմքը:

«Այսպիսով Լազարեանների դպրոցը պէտք էր համապատասխանէր միաժամանակ երեք հիմնական նպատակների՝

ա. լինել հայ երախաների համար կրթութեան լուսատու ճրագ,

բ. լինել Ռուսաստանի համար արեւելեան լեզուների ուսումնասիրութեան կենտրոն,

եւ գ. լինել ընդհանուր կրթութեան դպրոց ամէնքի համար<sup>28</sup>»:

«Մոսկուան, — գրում է Գ. Ստեփանեանը, — հանդիսացել է հայկական մշակոյթի խոշորագոյն օջախներից մէկը:

«Եթէ 16—17րդ դարերում Մոսկուան գերազանցապէս հանդիսանում էր տնտեսական, առեւտրական մի կենտրոն հայ վաճառականութեան համար<sup>29</sup>, ապա հայ առեւտրական բուրժուազիայի դարթօնքի տարիներին, ամբողջ 19րդ դարի ընթացքում հանդիսանում էր նաեւ մի մտաւոր լուսաւորական կենտրոն հայութեան համար: Այնուհետեւ հեղինակը անցնելով Լազ. ձեւարանին, գրում է.

«Լազարեան ձեւարանը իր 100ամեայ գոյութեան ընթացքում կատարել է մեծ աշխատանք հայկական գրականագիտութեան զարգացման, հայ երիտասարդութեան ուսական առաջաւոր կուլտուրային հաղորդակից դարձնելու ուղղութեամբ:

«Լազարեան ձեւարանի միջոցով է, որ հայ ժողովրդի առաջաւոր ներկայացուցչիչները հնարաւորութիւն ստացան Մոսկուայում բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելով գրական-բանասիրական մանկավարժական, դաստիարակչական լայն գործունէութիւն ծաւալել հայրենակ քաղաքներում: Լազարեան ձեւարանում դասախօսում էին այնպիսի աչքի ընկնող դէմքեր, ինչպիսիք էին Գ. Սարգսեանը, Մ. Էմինը, Ս. Շահազիզը, Ստ. Նազարեանը եւ ուրիշները: Այնտեղ էր դասախօսում նաեւ մեծ յեղափոխական դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանը:

«Բարձր դաստիարակութիւն ստացած այս մարդկանց շնորհիւ է, որ աճեց բանասէրների եւ մանկավարժների մի մեծ թիւ: Ձեւարանի սաներից էին մեր բանաստեղծները՝

<sup>28</sup> Տե՛ս «Լազ. ձեւ. 75ամեակը», Գ. Գանանեանի ճառը, էջ 1—3:  
<sup>29</sup> Հեղինակը հաղորդում է, որ «1779 թուին Մոսկուայում կար 42 հայ ընտանիք: 1810 թ. այդ թիւը բարձրացաւ 60ի, իսկ հետագայում աւելի եւս մեծացաւ»:

Յովհաննէս Յովհաննիսեան, Ալ. Մատուրեան<sup>30</sup>, Վ. Տէրեան, եւ ուրիշներ, որոնք տարիների ընթացքում խոշոր կրթական գործունէութիւն ծաւալեցին հայ դպրոցներում, հանդիսացան հայ գրականութեան աչքի ընկնող ուժերը: Լ. ձեւարանում էր սովորել եւ ապա դասախօսել հռչակաւոր լեզուագէտ եւ հայկարան Ն. Մառը:

«Լազարեան ձեւարանը ունէր իր սեփական սուլարանը, որտեղից բազմաթիւ գրքեր էին լոյս տեսնում, այդ թւում մի քանի պատմագիրներին՝ ինչպէս Յովհ. Գրասխանակերացու, Եղիշէի, Կիրակոս Գանձակեցու, Մ. Կազանկատուացու, Ստեփաննոս Օրբէլեանի եւ ուրիշների գործերը:

«Հիմնականում Լազարեան ձեւարանի շուրջը համախմբուած ուժերն էին, որ 19րդ դարի կէսերին ստեղծեցին Մոսկուայի հայ մամուլը: 1858 թ. Մ. Նալբանդեանի եւ Ստ. Նազարեանցի ջանքերով հիմնադրուած է «Հիւսիսափայլը», որը խոշոր դեր կատարեց հայ իրականութեան մէջ, ազխտութեան ու յետամնացութեան մերկացման, առաջաւոր զազախարների տարածման ուղղութեամբ: «Հիւսիսափայլ»ին աշխատակցում էին Ռ. Պատկանեանը, Ս. Շահազիզը, Մ. Մաղաթեանը, Բաֆֆին եւ ուրիշները:

«Հիւսիսափայլ»ից բացի, Մոսկուայում լոյս են տեսել մի քանի ուրիշ պարբերականներ՝ «Ճռաբաղ», «Հանդէս գրականական եւ պատմական», «Նոր Փորձ» եւ այլն:

«60ական թուականներին Մոսկուայում հաւաքուած հայ երիտասարդների սերունդն էր<sup>31</sup>, որ առաջին լուրջ փորձեր կատարեց ներքին թարգմանութեան լուսադոյն նմուշների թարգմանութեան ուղղութեամբ<sup>32</sup>: «Հիւսիսափայլ»ի էջերում լոյս տեսան մի շարք ինքնուրոյն եւ թարգմանական կարեւոր երկեր, որոնք մնում են հայ գրականութեան ամենայաջողած էջերի թւում:

«Մոսկուայում կենտրոնացած այդ սերնդի ջանքերով էր դարձեալ, որ 1859 թ. յունուարի 27ին Միքայէլ Ստեփանեանի բնակա-

<sup>30</sup> Ընդ չէ՛, որքան մենք գիտենք, Ալ. Մատուրեանը ձեւարանի սան չէ եղել: Մենք նրա անուան չենք հանդիպել ձեւարանի սաների է՛ւ ո՛չ մի անուանացուցակում կամ որեւէ մատնանշում այլ աղբիւրներում:  
<sup>31</sup> Որի մի խոշոր տոկոսը կազմում էին Լ. ձեւարանի շրջանաւարտները:  
<sup>32</sup> Յիշատակենք Մ. Մաղաթեանին, որ թարգմանել էր Լեւոնտոյի հռչակաւոր Պօսէմ՝ «Գեւոր»: Այդ նէլ էր Լեւոնտոյի հռչակաւոր Պօսէմ է՛ւ մնում է լուսադոյնը: Թարգմանութիւնը մինչեւ այսօր էլ մնում է լուսադոյնը:

բանում հայ ուսանողների ջանքերով ու ակտիւ մասնակցութեամբ ներկայացուեց Վանանդեցու «Արխտակէս» պիեսը եւ մի վոդեւիլ:

«Ըստ էութեան այս ներկայացումը հանդիսանում է արեւելահայ թատրոնի առաջին լուրջ փորձը, որը իր վրայ հրաւիրեց նաեւ մամուլի ուշադրութիւնը: Միք. Նալբանդեանը այդ առիթով «Հիւսիսափայլ»ում գրած ակնկէղիայում ողջունում էր հայ ուսանողների թատերասիրական յիշեալ քայլը եւ ցանկութիւն էր յայտնում տարեկան դէթ երկու անգամ այդպիսի ներկայացումներ տալու:

«Ամբողջ 19րդ դարի երկրորդ կէսի ընթացքում Մոսկուան հանդիսանում էր կուլտուրական մտաւորական այն կենտրոնը, որին յառած մնում էին հայ առաջաւոր բոլոր գրողների ակնարկները (Ղ. Աղայեան, Պ. Պոչեան, Յովհ. Յովհաննիսեան եւ ուրիշները...»:

Ի վերջոյ, պարզեմք մի կարեւոր խնդիր եւս, որ տարածայնութեան տեղիք էր տուել 1913 թուին, երբ հարց ծագեց տօնելու ձեւարանի գոյութեան 100ամեակը: Ե՞րբ տօնել յորեկանը՝ 1914ին թէ 1915ին, ուրիշ խօսքով, ե՞րբ է եղել ձեւարանի հիմնադրութիւնը՝ 1814ին թէ 1815ին:

1913ին ձեւարանի վերատեսուչն էր Պրոֆ. Պաւլ Գիդուլեանովը, որն որոշ պրոպոզիցիեր կատարելով եկել էր այն համոզման, որ ձեւարանի հիմնադրութիւնը եղել է 1814ին, հետեւաբար 100ամեակը լրանում է 1914ին եւ ո՛չ թէ 1915ին: Այս իսկ պատճառով նա կարգադրեց ձեռնամուխ լինել նախապատրաստական աշխատանքների: Սակայն, ինչպէս յայտնի է, 1914 թ. ծագեց առաջին համաշխարհային պատերազմը եւ յորեկանը տեղի չունեցաւ:

Պրոֆ. Գիդուլեանովը որոշ տուեալներ ունէր մտածելու, որ ձեւարանի հիմնադրութիւնը տեղի է ունեցել 1814 թ. թէեւ մինչ այդ ընդունուած է եղել 1815ը, բայց կը տեսնենք, որ աւելի ճիշդը հէնց 1815 թուականն է:

ձեւարանի իրական հիմնադիրն ու կազմակերպիչը՝ Յովակիմ աղա Լազարեանցը իր ծանօթ «Յայտարարութիւն առ իւր համազգիս» գրութեան մէջ, լոյս տեսած 1820 թուին, հետեւեալ տեղեկութիւններն է տալիս մեզ հետաքրքրող խնդրի մասին.

«... յամին 1814 Եկեալ իմ ի Ս. Պետերբուրգայ աստ ի Մոսկով՝ օգնականութեամբն Աստուծոյ, եւ բարեհաճութեամբ օրհնեալ ազգանամ Տէրութեանս՝ ձեռն արկի շինել զլայնանիստ հոյակապ Համալսարան<sup>33</sup>. Եւ յետ ծախելոյ աւելի քան 200 հազար ուրլի ի սեփական գոյից իմոց՝ բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յարքունական գանձանակէ (այն է գոտիոսիս բարդեայս ի բազում ամաց հետէ ի մայր գումարէ անդր մուծելոյ յինէն, ըստ զօրութեան կտակի գերագանց եղբոր իմոյ Աղայ Յովհաննէսի), հազիւ քէ հասուցի զայն յիւր աւարտ ի 1816, եւ ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկաձին մանկունս յամենայն շրջակայ նահանգաց, եւ սկիզբն կալայ ի ձեռն քաջակիրք զաստիարակաց վարժել զնոսա ի փառս մարդասիրին Աստուծոյ<sup>34</sup>»:

Այս տողերից պարզ երեւում է, որ  
 ա. ձեմարանի հիմքը դրուած է 1814 թ.:  
 բ. Շէնքի կառուցումն աւարտուել է 1816 թ.:

գ. Առաջին ուսումն. տարին սկսուել է 1817 թ. յունուարին:

Այնուհետեւ Մսեր Մսերեանցը իր «Յիշատակարանի, Երրորդ մասում, գլուխ երկրորդում տալիս է Լազարեան ձեմարանի շինութեան պատմութիւնը, որը սկսում է այսպէս.

«Տեսրց Լազարեանց ձեմարանն Արեւելեան լեզուաց որ ի Մոսկուա կառուցեալ է յամի Տեառն 1815, ի ներգործական Պետական Խորհրդականէ եւ ի Հրամանատար Ասպետէ ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց, եւ յեղբորէ նորա ի Յովակիմայ Լազարեան Լազարեանց...»:

Այս տողերին Մ. Մսերեանցը կցել է հետեւեալ ծանօթութիւնը.

«Հիմնարկութիւն ձեմարանիս սկսեալ եւ վնարեալ յընթացս 1813 եւ 1814 ամաց, իսկ զասատուութիւնն ի նմա սկսեալ է յամի 1816 (տե՛ս ի Կարգադր. ձեմ. յէջ 12)<sup>35</sup>»:

Այս տեղեկութիւններէց, որոնք հիմնուած են նոյնպէս պատմական արժէք ունեցող փաստաթղթի վրայ, հետեւում է, որ՝

<sup>33</sup> «Համալսարանի» անունը ի թղթի աստ եւեթ տեսանի բնօրինակ ձեմարանին Լազարեանց, եւ այն յայտ է թէ՛ ըստ կամս կարծեաց կամ ըստ ասանձին ինչ հաճոյից շարադրողի բանեցող: Մսեր Մսերեանց:  
<sup>34</sup> Տե՛ս Մսեր Մսերեանց, «Յիշատակարան», էջ 57, Մասն Ա., ընդգծումները մերն են:  
<sup>35</sup> Անդ, Մասն Գ., էջ 12:

ա. ձեմարանի հիմքը դրուած է 1813 թ.:  
 բ. Շէնքի կառուցումը սկսուել է 1813 թ., շարունակուել եւ աւարտուել է 1814 թ.:

գ. Դասաւանդութիւնը սկսուած է 1816 թ. յունուարին:

Այս տուեալների մէջ եւս խօսք չկայ 1815 թ. մասին:

Պրոֆ. Ալ. Չինովեւը ձեմարանի իր համառօտ պատմութեան 32րդ էջում գրում է.

«1814 թ. մայիս 10ին օրհնուեցին՝ գոյութիւն ունեցող նախկին տունը, տեղը եւ հիմնադրութիւնը նոր շէնքի...: Մի տարի անց, 12 մայիս 1815 թ. սկսուեց դասաւանդութիւնը ձեմարանը մտած աշակերտների համար, գլխաւոր հսկողութեամբ հիմնադրի եւ Հոգաբարձու Յովակիմ Լազարեանի»<sup>36</sup>:

Այս տուեալներից հետեւում է, որ՝  
 ա. ձեմարանի հիմքը դրուել է 1814 թ. մայիս 10ին:

բ. Մի տարի անց՝ 1815 թ. մայիսին սկսուել է առաջին ուսումն. տարին:

ձեմարանի պարտիզում Լազարեանների յիշատակին կառուցուած բուրգի վրայ եղած արձանագրութեան մէջ մատնանշուած է ձեմարանի հիմնադրութեան թուականը՝ Մայիս մէկ 1815 թ.<sup>37</sup>:

Մ. Մսերեանցը յիշատակում է նաեւ Մոսկուայի մի ուսւ լրագրի վկայութիւնը, ուր ասուած է թէ՛

«Յամին 1814 թ. կանգնեցաւ ի մայրաքաղաքի մերում ուսումնարան նոր՝ ծախիւք երկուց եղբարց՝ Յովհաննու եւ Յովակիմայ Լազարեանց<sup>38</sup>...»:

Պետերբուրգի «Ռուս. Ինվալիդ» կիսապաշտօնական թերթում 1825 թ. գրուած է եղել՝

«... Այսու եղանակաւ հիմնաւորեալ յամին 1816 Հայկական ձեմարանն Լազարեանց...»:

Վերջապէս կայ մի այլ պատմական փաստաթուղթ, ուր տեղեկութիւն կայ ձեմարանի հիմնադրման թուականի մասին: Այդ փաստաթուղթը մեր վերը յիշատակած խնդրագիրն է, որ Յովակիմ աղան եւ նրա երկու որդիքը՝ Յովհաննէան ու Պաշտուրը ներկայացրել էին կայսեր Ալէքսանդ Ա. ին 1824 թ.

<sup>36</sup> Տե՛ս Պրոֆ. Չինովեւ, էջ 86:  
<sup>37</sup> Տե՛ս Մ. Մսերեանցի «Յիշատակարան», Մասն Գ, էջ 92:  
<sup>38</sup> Անդ, էջ 94:

յունիս 19ին: Այդ խնդրագիրը սկսում է հետեւեալ բառերով.

«Ուրամեայ փորձը ապացուցեց մեր զարոյցի իրական օգտաւէտութիւնը» եւ այլն:

Եթէ ձեմարանում դասաւանդութիւնը սկսուել է 1815 թ. մայիս 12ին, ինչպէս վկայում է Պրոֆ. Չինովեւը, ապա 1824 թ. յունիս 19ին կը լինի ուղիղ 8 տարի. ուրեմն, ձեմարանի հիմնադրութեան թուականը համարում է 1815 թուականը:

Չանց ենք առնում Հայկական աղբիւրների (Երիցեան, Լէօ եւ այլն) տեղեկութիւնները:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնելու լինենք, որ ձեմարանի 50ամեակը կատարուել է 1865 թ. Պաշտուր աղա Լազարեանցի կենդանութեան օրօք, իսկ 75ամեակը՝ 1890 թ., այսինքն՝ միշտ ընդունուած են եղել 1815 թ. ձեմարանի հիմնադրութեան, թուած է, որ հէնց 1815 թ. տարի ընդունել եւ անխախտ պահպանել: Չխախտենք, ուրեմն, պատմական աւանդութիւնն ու շիտթ չատաջանենք մտքերի մէջ. ընդունենք ընդ միշտ 1815 թ., որպէս ձեմարանի հիմնադրութեան իսկական թուականը:

(Շարունակելի:)

**ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀԵՑ ՄԾԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

(Շարունակութիւն:)

10. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՇԿԱԲՏԱՅ ՅԱՐԻՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (1861)

Ընկերութիւնս յիշուած է Ա. Ալպոյաճեանի քով<sup>76</sup>, առանց մանրամասնութեան: Հին յիշատակութեան մը չենք հանդիպած: Արքունի թշկական դպրոցը՝ Կալաթա Սա-Արքունի թշկական Մուլթան Մահմուտ Բ. էն րայ՝ հիմնուած է Սուլթան Մահմուտ Բ. էն 1839 Մարտ 14ին, միայն մահմեդական տղոց համար: 1841ին սկիզբը Սուլթան Ազիզ թուլ կու տայ որ «բայաներու» — Հայ, յոյն հրեայ — տղաք ալ կարենան մուտք ունենալ այդ վարժարանը<sup>77</sup>: Հայ աշակերտներէն 3 հոգի — Ստեփան Ասլանեան, Նիկողայոս Արրիլոֆ եւ Գրիգոր Եանովիչեան — 1848ին արդէն

<sup>76</sup> Անդ, էջ 83:  
<sup>77</sup> Արշ. Արար. 1840, թ. 8:

թշկական վկայութիւն կը ստանան<sup>78</sup>: 1845էն սկսած Հայ թիշկներ ալ դասախօսած են հոն<sup>79</sup>:

11. ԿՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Ընկերութեան Յանձնաժողովի Ատենապետ՝ Հ. Ս. Արաճաճեան՝ 1862 Ապրիլ 17ին Բերայէն ծանուցում մը կը հրատարակէ Մասիսի մէջ<sup>80</sup>, որմէ կը տեղեկանանք Ընկերութեան գոյութեան մասին: Ծանուցումը կ'ըսէ. «Ենայողական Ընկերութեան կանոնադրութիւն մը խմբագրելոյ համար կազմուած Յանձնաժողովը կատարած ըլլալով իրեն եղած յանձնարարութիւնը, ընդհանուր ժողով կը հրաւիրէ յառաջիկայ Կիւրակէ՛ որ է Ապրիլ 22 ի ժամ 3՝ ի Նարեկեան վարժարան Բերայի — յայտնելով նաեւ որ ամեն փափաքողը ազատ են ներկայ գտնուել յիշեալ ընդհանուր ժողովոյն»:

12. ՊԱՆԱՊԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի պատասխարեալներու թշուառ վիճակը բարուքելու համար կազմուած Օգնական Ընկերութիւնը ունեցած էր անհամակիրներ ալ, որոնք տարբեր տեսակէտի եւ գաղափարի տէր ըլլալով՝ հարկ համարած էին կազմելու ուրիշ Ընկերութիւն մը, որ հսկէր Օգնական Ընկերութեան գործերուն վրայ: Այս երկրորդ Ընկերութիւնը կոչուեցաւ Պանապան Ընկերութիւն, որ սակայն առանց դրական գործ մ'արտադրելու՝ օգտակար եղողին ալ արգելք եղաւ էր գործելու:

Պահապան Ընկերութեան վերատեսչութիւնը 45 անգամ է կը բաղկանար, իննը թաղերէ հինգսկան հոգի ընտրուած ըլլալով<sup>81</sup>: Ընկերութեան գոյութիւնը տարի մ'իսկ չտեւած՝ լուծուած է<sup>82</sup>:

13. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

1857 Մեղսեմբերին Արիտակէս Յովհաննէսեան եւ Գարրիէլ Երանեան «ազգիս երկու քաջահմուտ եւ բազմարդիւն երաժիշտները<sup>83</sup>, կը հրատարակեն «Քնար Արեւելեան» երաժշտական ամսաթերթը, նուիրուած

<sup>78</sup> Անդ՝ 1848, թ. 317:  
<sup>79</sup> Դոկտ. Վ. թորոմեան, անդ՝ էջ 581—582:  
<sup>80</sup> 1862, թ. 532:  
<sup>81</sup> Պատմ. Ս. Փ. Հիւ., անդ՝ էջ 162:  
<sup>82</sup> Հմմտ. Մեղու., 1862, էջ 81—83: — Մասիս, 1862, թ. 531:  
<sup>83</sup> Մասիս, 1857, թ. 297: